

ԵՐԱԿՐՈՆԵԱՆ

ՄԱՅՐ ԱԹՈՒՍ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՍՏԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿԵԱԲԱԹԱԹԵՐԹ

ՇՆՈՐՀԱՎՈՐ ԱՄՄԱՆՈՐ ԵՎ ՄԲ ԾՆՈՒՆԴ

Սարկավագական ձեռնադրություն

Դեկտեմբերի 24-ին՝ Սբ Ստեփանոս Նախավկայի եւ առաջին մարտիրոսի տոնին, Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Եկեղեցում, հընթացս Պատարագի տեղի ունեցավ 40 սարկավագի ձեռնադրություն:

Նախորդ օրը՝ երեկոյան ժամերգության ընթացքում, Մայր տաճարում տեղի էր ունեցել կիսասարկավագության, ուրարակության եւ դպրության տվչության հանդիսավոր արարողությունը:

Կոչմանն ու ծառայությանը՝ Հովակիմ սրբազանը մասնավոր կերպով ընդգծեց, որ Ս. Ստեփանոսի տոնն իր հստակ ու խոր պատգամն ունի՝ ուղղված բոլոր սարկավագներին՝ անձնագոհաբար ծառայելու մեր Մայր Եկեղեցուն եւ հայ ժողովրդին: Ս. Պատարագից հետո Մայր Աթոռի բոլոր սարկավագներին եւ նորընծաներին իր հայրապետական օրհնությունը բաշխեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Տոնի ա-



Պատարագի ընթացքում, ձեռամբ Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի տնօրեն, Արթիկի թեմի առաջնորդ Հովակիմ եպս Մանուկյանի, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի Ե լսարանի 22 սան, Զահանայից պատրաստման լսարանի 17 ուսանող եւ Սյունյաց թեմից մեկ սպասավոր արժանացան սարկավագության աստիճանի:

Ձեռնադրության արարողության ավարտին սրբազան հայրը շնորհավորեց նորընծաներին եւ Մայր Աթոռի ողջ սարկավագաց դասին: Անդրադառնալով սարկավագական

միջով շնորհավորելով սարկավագներին՝ Վեհափառ Հայրապետը հորդորեց նրանց կյանքի դժվարությունների առջեւ չհեղձնել, ամուր մնալ հավատքի մեջ, կյանքն ապրել նվիրումով ու հանձնառությամբ, իբրեւ հոգեւոր սպասավորներ՝ ունենալ նաեւ նահատակության բարձր գիտակցություն՝ մաղթելով նրանց հաջողություններ իրենց եկեղեցական սպասավորության մեջ: Վեհափառ Հայրապետն ընդգծեց, որ սարկավագները հույս եւ լավատեսություն են ներշնչում Եկեղեցու վաղվա օրվա հանդեպ:

Նվիրատվություն Սիրիայի հայկական դպրոցներին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ու Մայր Աթոռ Սբ Էջմիածնի ուշադրության կենտրոնում շարունակում են մնալ Սիրիայում տիրող իրավիճակը եւ սիրիահայության ծանր կացությունը: Հայ Առաքելական Եկեղեցու աշխարհասփյուռ թեմերը Մայր Աթոռի

միջոցով պարբերաբար աջակցություն են ցուցաբերում սիրիահայությանը՝ հաղթահարելու դժվարին պայմանները:

Սուրբծննդյան տոների առիթով Մայր Աթոռը 100.000 ԱՄՆ դոլար է փոխանցել Դամասկոսի հայոց թեմին՝ Սիրիայի հայկական դպրոցներին կարիքների համար:

ԱՄՔՆՈՐՅԱ ԽՈՐՀՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳԱԼԻՔԻ ՇՈՒՐՋ

«Փա՛ռք Զեզ, Աստվա՛ծ, փա՛ռք Զեզ ամեն բանի համար, փա՛ռք Զեզ»:

Հ. Ոսկեբերան

Սիրելի՛ հայ հավատացյալ, ես մեկ տարի բոլորեց իր ծնունդը, բովանդակվեց, ամբողջացավ՝ իր հին ու նոր հույզերով ու հոգսերով, երազանքներով՝ նվիրական՝ մանկան խաղի պես գվարթ, հոսող ջրին հատուկ ինքնամաքումի բնական, բանական բնագրով ու զգացմունքով, հաճախ ամենանուրբ, ամենասուրբ լինելու չափ ու խորախորհուրդ-խորհրդավոր կեցությամբ, որ երբեմն միայն մարդկային ներաշխարհին է հատուկ եւ Աստծուն է հայտնի հայտնապես: Տիրավանդ ու ավետարանառաք խոսքով զորացած եւ խոսքին հավատարիմ՝ բովանդակ ողջ գոյն ինքնահատուկ կերպով զինավորվում ու նորոգում է իր կյանքն ու կենցաղը, ինչպես որ գարնանն է ամեն բան նորոգվում ու երիտասարդանում՝ շարունակ փթթացող կանաչով: Եվ մի՞թե երբեք է այլուրեք գոյություն ունի այսչափ կատարյալ մեկ այլ պարզեւ: Այս անգամ էլ, ինչպես ամեն մասնավոր-հատուկ առիթի, զգացմունքը շարունակում է գերիշխել բանականությանը՝ անթույլատրելի աստիճանի սեղմելով ու ցրելով, տարածելով ներքին զգայացունց վիճակների (որոնք ճիշտ անդրադարձն ու ուղիղ հակադարձումն են այն բազում-անհամար իրավիճակների, որպիսիք այլեւս չեն ծնվի անցյալում ու չեն ուղղվի դեպի ապագան, բայց կյանքի կոչվեն հավիտենականության մեջ եւ հավիտյանի համար, ժամանակ առ ժամանակ բախվելով իրար, անհուն տիեզերականի մեջ զրնգալով, մերթնդմերթ հազանալով սրընթաց դեպի վեր ու վար, վար ու վեր՝ շարունակ թրատելով ընդհանուր համընդհանուրը) արգասիքներն ու հիփոսի սիրակարոտ վայրկյանները՝ աննախադեպ, անչափելի: Ամեն անգամ անբացատրելի ու անփոխառելի, անմերժելի մի իրողություն կա այս ամենի մեջ, երբ... երբ մանավանդ զգացմունքն ինքնահատուկ կերպով «մերժում է» բանականությունը: Կարելի է ասել, որ այսօրիական պահերին մարդն ամենից ավելի է վերադառնում ինքն իրեն: Ինքնամերժումի եւ ինքնանորոգության մի հիմնարար գործառնություն ամեն անգամ յուրովի սրբագրում է ինքն իրեն, մաքրագործվում իրենով, ինչպես որ հոսող ջուրը՝



«Փա՛ռք Զեզ, Աստվա՛ծ, փա՛ռք Զեզ ամեն բանի համար, փա՛ռք Զեզ»:

Հնի ու նորի միանգամայն օրինաչափ հերթագայության այս շրջափուլը մի՞թե գայթակղիչ է, հեթիաթային, ինչպես քաղցր երազը, եւ նույնքան իրական, որքան աշխան գույները, որքան մարդկային փափագը խոստելու, հաղորդակցվելու Արարչի հետ եւ գովերգելու իր ապրած մեն մի վաղանցուկ վայրկյանը, որ բնության մեջ հաճախ «թիթեռային», «թիթեռնական» է բնութագրվում:

«Փա՛ռք Աստծուն՝ բարձունքներում, եւ երկրի վրա խաղաղություն, եւ հաճություն մարդկանց մեջ» (Ղուկ. Բ 14):

Փա՛ռք Զեզ, որ այս անգամ էլ Զո ներկայության հաղորդն ու հավատարիմը, կարողն ու անկարողը, խորունկ ապրումն ու բազմաձայն տարածական տրամադրությունները հանդիպման պահ ունեցան, հավաքական ինքնամոփումի առիթ՝ ոչ թե առանձին կամ անորոշ գալիքի սին հույսին ու տազնապներին անձնատուր, այլ՝ առանձնացած, ինչպես մանուկը խաղի ընթացքում, ինքնամաքումի ու ինքնատեսության նոր հուզումներով, որպիսիք անմիջական շարունակությունն են հեռավոր ու լուսարձակ դարերի՝ կանաչ-կապույտ ընդարձակությունների նվիրական անձկությանը...

Շարունակությունը՝ էջ 2

ԱՄԸՆՈՐՅԱ ԽՈՐՀՐԱՊԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳԱԼԻՔԻ ՇՈՒՐՋ

Սկզբը՝ էջ 1

Ամեն անգամ յուրովի ու յուրովասն, ինքնահատուկ է Նոր տարին: Հենց միայն այն պատճառով ու պատճառաբանությամբ, որ ինչ-որ զարմանալու աստիճանի չենթարկվող եւ ապշելու աստիճանի ինքնուրույն ու ինքնագնա մի ընթացք է տեսանելի՝ անհունից եկող ու դեպի հավիտյանը ձգվող: Ինչ-որ տարածական, ծովածավալ-ընդգրկուն ու միաժամանակ միանգամայն բնականոն, հաստատուն շրջափուլ, որը նույն ժամանակ, կարծեք, անձնավորված է, եթե չասենք՝ ոգեւորված: Հիմա, ծննդյան ու վախճանի ներկայություն կա այս ամենի մեջ, տարբեր ու տարբերվող անհատականության անժխտելի իրողություն: Եվ այս ամենն անվախճան է՝ իր սկզբունքին անդավաճան լինելու չափ: Ամեն բան կյանքում իր նախընթացն ու վերջնականն ունի, իր նախորինակը: Նոր բան գիտենալու մարդկային տեսական մղումը դեպի կյանքի ամենատարբեր ու բազմակնճիռ երեսները, աղաղակող հակասություններն ու տազանայներն այլ բան չեն հուշում, քան, նախ եւ առաջ, որ կյանքն առանց գոհողությունների անկարելի է: Եվ որ ամեն անգամ ժամանակի ու տարածության մեջ թեւաբախվելով առաջին հայացքից լիակատար հակասություն ու հակադրություն առաջ բերող իրողությանը՝ ոչ թե հարկ է հմայվել կասկածանքով՝ հանդեպ սեփական լիարժեքությունը, վերապրել երբեմնի վշտերը եւ կամ համակվել սնահավատության տիրապետությամբ, այլ անվորով շարունակել ամրապնդել կյանքի ներքին հենարանը, հոգեւոր հենարանը: Այն հենարանը, որտեղ ներդաշնակորեն համերաշխվում, համատեղվում են անցյալի ու ապագայի բոլոր ժամանակները, որից սկզբնավորվում է հերթական ներկան, ուր մի դրությունից անցումը մյուսին, պայմանավորված իր բնական հանգամանքով, այլ կերպ չի բնութագրվում, եթե ոչ վերափոխություն կամ գոյափոխություն: Զանգի «պառաված ու աղքատացած» թեմիսերը չէ, որ պետք է հոգեմուտք են

կամ փարատեն մարդկային դուրաբեկ անհատականությանը ինքնավերլուծությունների տառապանքները, այլ ուրախության ու խանդավառության իրական ապրումներով հոգեխառն կարեկցանքն ու հոգատարությունը, ընդամենն այն ամենը, ինչն իրավացիորեն առաջ է բերում, հիրավի, բարձրագույն երանություն՝ «գոհություն, փառք ու պատիվ», ինչպես պիտի նկատեր բանաստեղծը: Եվ չնկատել այս աչառու հանգամանքը՝ առնվազն նշանակում է մերժել «Հայոց սրբազան տիեզերքը», եթե չասենք՝ կատարյալն ու տիեզերականն առհասարակ: Եվ ահա գոհության, փառքի ու պատվի անձավում ծնվում է Մեկը, Ով վերաբացելու է Եդեմի դռները՝ վերահաստատելու երբեմնի կորսված ուխտի ճանապարհն ու վերակոչելու երկնի ու երկրի սրբարար Համբույրը, Ում «արտաքին երեւույթն» արդեն իսկ բավարար է, որպեսզի լեռները շարժեն, փոթորիկը սարսվի ու հանդարտանա, կույրը տեսնի, մուրը վերանա, ցեղային՝ ամենահարազատ թվացյալ գիտակցությունը վերափոխվի ազգային ինքնագիտակցության... որ մանկան ճիչն ու կանչը կոչ դառնան ու գոյավորեն հավերժի կոչված ու դեպի անեզրն ընթացող հավիտենականի առանցքը, որ ժպիտն ու ծիծաղը դառնան տիեզերասփյուռ իրականությանը հիմն ու վեմն անկասելի, որ տիեզերականն ու աստվածամարդկայինը հանդիպեն՝ այլեւս բաժանվելու չափ եւ բաժան-բաժան ու ինքնագնա հեռավորությունից չկարեկցեն միմյանց, անուղղակի եղանակով վերահաստատելով, թե իրենց բախտն էլ մնաց անդու ժամանակների շղարշի տակ՝ ծանր ու անշունչ դարերի ետեւում: Հին ու նոր, լավ ու բարի ժամանակների մասին ամենից ավելի մենք խորհրդածում ու հիշում ենք այս ժամանակահատվածում: Կարելի է արձանագրել, որ մեզանում այսօր արդեն քաջահայտ վերապրումները ծնունդ են արդյունք են հենց այսօրինակ իրականությանը: Ելնելով միայն այն հանգամանքից, որ բարո, գեղեցկի ու լավի մասին պատկերացումն ու վերաբերմունքը

պարզապես չեն կարող աստվածային օրինադրության արդյունք չլինել: Չէ՛ որ տարվա ծնունդն էլ կրկին արդյունք ու հետեւանք է աստվածային ներկայության: Փա՛ռք Զեզ հազարաբերան, որ այսօր արդեն հոգ ես տարել վաղվա լուսավոր գարնան եւ ավետաբեր ծիծեռների վերագալուստին, որ ծիծեռնավոր ամառ լինի թե ճերմակահունդ ձմեռ, մարդկությունը՝ իբրեւ մշտական ու մշտանորոգ հայտնություն, իր ամենասրբոցում ունի արդեն ամենամեծ «աջալուսանքի» ժառանգավոր գոյառիթմը: Եվ մի՞թե երբեք մարդկային աշխարհը լուսավառելու համար հավերժությունը ծրարելու այլ մի օրինակ է եղել: Մի՞թե երբեք որեւէ հրեշտակ կերեւակայեք, թե պիտի թողնի հավերժագնաց երկինքը, միանա հովիվներին եւ այն էլ գովերգելու ոչ թե երկրի հեռագնաց ու սահմանաձեւ թվացող գեղեցկությունները, այլ՝ մի Մուր, որ հետագայում պիտի դառնար լույս սրբարանը երկնի ու երկրի Աքանջելիքի: Վախն այլեւս առհավետ մերժված է: Իսկության մեջ գեթ երկունքն է իշխում, եւ բոլորակվեր «մեծ ուրախությունը», որն ըստ էության՝ անուրանալի է, որովհետեւ աշխարհի եկող յուրաքանչյուր ոք չունի լուսավառվելու այլ մի աղբյուր (իմսո. Հովհ. Ա. 9): Այսպես՝ գիտակցական հավատքով է, որ վերանում է աշխարհի մեղքը: Եվ եթե մեկն էլ նշան կամենա տեսնել, թող նախ մաքրի յուր սիրտը (տե՛ս, Մատթ. Ե 8), քանի որ լույսի մեջ իսպառ խավար չի բնակվում: Եվ այսօր, երբ կրկին հայի ճամփան նվիրական է իր երազի չափ ու երկար, ինչպես համամարդկայինը, մի՞թե հիմնանորոգության այլ մի մուր կա մեզ համար, եթե ոչ մեր սրբություն սրբոցը՝ Մայր Եկեղեցին, որի լույս օրրաններից եւ օթեւաններից փառք, գոհությունն ու պատիվը նախանձախնդիր, ամբողջական ու խորհախորհուրդ հորդում են ու ցողում մեր սիրավառ միտքն ու էությունը՝ գալիքի հարապայծառ, վսեմ ավետիսով:

«Փա՛ռք Զեզ, Աստվա՛ծ, փա՛ռք Զեզ ամեն բանի համար, փա՛ռք Զեզ»:

Խառնակ վրդ. ՊՈՐՈՍՅԱՆ

ԼԵԶԱՄԱՐՏԱՆՑՉԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ Խ. ԱՐՈՎՅԱՆԻ «ՎԵՐՔ ՆԱՅԱՍԱՆԻ» ՎԵՊԻ «ԶԱՆԳԻ» ՆԱԿԵԼՎԱԾՈՒՄ

«*Ես ո՞ւմ զիմ ողբոց բացից սգարան, Ես ո՞ւմ դառն վիրացս ցուցիչ գրեթան*»:

Խ. Արովյան

Արովյանի «Վերք Հայաստանի» վեպով հայ գրականության պատմության մեջ բացվեց մի նոր շրջափուլ: «Վերք Հայաստանին» նորություն էր ե՛լ լեզվով, ե՛լ ոճով, ե՛լ արծարծած խնդիրներով, ե՛լ արտացոլած իրականությամբ: Այն ամենից առաջ արժեքավոր է հենց նրանով, որ ժողովրդի պատմության, նրա քաղաքական ճգնումների, ազգային խնդիրների, կենցաղի, կյանքի ու սովորույթների պատկերման մի ողջ հանրագիտարան է, պատմական փաստերի գեղարվեստական մարմնավորում՝ լեզվական համապատասխան ատաղձով ու բոլորովին նոր ոճական հնարաններով: Եվ պատահական չէ, որ հայ գրականության ու հայոց գրական լեզվի զարգացման ուղիները մեծ մասամբ ձևավորվեցին «Վերք Հայաստանի» վեպի ձևային ու բովանդակային հիմքերի վրա:

Աշխարհաբարի զարգացման գործում աննախադեպ է Արովյանի դերը: Նա աշխարհաբարը զարգացրել ու դարձրել է գրականության ու գեղարվեստի լեզու: Եվ հենց այստեղ պետք է տեսնել նրա մեծ ծառայությունը: Իր վեպի «Հառաչաբանում» Արովյանը որոշակի գրում է, որ մինչ իր գրելը՝ «նոր լեզուն», այսինքն՝ աշխարհաբարը կար, բայց այն «անպատիվ» (իր խոսքն է - Ա. Ա.) վիճակում էր, իսկ գրաբարը չէր կարող իր ասածը տեղ հասցնել: Իր ստեղծագործությունը ձեռնարկելուց առաջ նա կանգնած էր մեծ երկընտրանքի առջև. մի կողմից հարուստ ու ճոխ գրաբարը, բայց անըմբռնելի ժողովրդական լայն զանգվածների (հիշենք, թե ինչ էր գրում այդ մասին Արովյանը՝ «թեկուզ ուներեն, նեմեցերեն թե ֆրանսուզերեն գրած, թեկուզ գրաբար՝ տասը կըլի, որ հասկանային...») (Խ. Արովյան, *Երկեր, Երեւան, 1984, էջ 8: Այսուհետ այս գրքից բերված բոլոր մեջբերումների էջերը կնշվեն տեքստում - Ա. Ա.*) մյուս կողմից՝ դեռ չմշակված, կոշտ ու բարբառախառն աշխարհաբարը, որ հայտնի չէր՝ կկարողանա՞ր արտահայտել գրողի բոլոր խոհերն ու ապրումները: Հայ իրականության մեջ առաջիններից մեկն Արովյանն էր, որ կանխազգաց աշխարհաբարը գրականությամբ ինքնահաստատելու անհրաժեշտությունը եւ այդ լեզուն մշակելու ու կատարելագործելու ասպարեզում աննախադեպ աշխատանք կատարեց, սիրել տվեց նոր լեզուն, նոր ուղի հարթեց «լուսավորյալ լեզվին» (իր բնութագրումն է -Ա. Ա.): Ուրեմն Արովյանը, բառիս լայն իմաստով, նորարար է մեր գրական-գեղարվեստական լեզվի զարգացման գործում, եւ աշխարհաբարով կարելի է հասնել գեղարվեստական պատկերավորման ամենաբարձր աստիճանի, արտահայտել ցանկացած միտք ու զգացմունք, մարդկային բարո

ներաշխարհի հույզեր, մի բան, որ փորձում էին ժխտել գրաբարսերները: Նա համոզված էր, որ լեզուն ժողովրդի առաջընթացի հետ փոփոխվում է, տարբեր ձեւերով ու միջոցներով իրագործում իր հաղորդակցական գործառնությունը, եւ եթե գրաբարը դադարել է հայ ժողովրդին հասկանալի լինելուց, պետք է հրաժարվել նրանից եւ աշխարհաբարը դարձնել հայ նոր գրականության լեզու, ստեղծել այնպիսի երկեր, որոնք հարազատ լինեն ժողովրդի սրտին ու ըմբռնողությանը: Չբաղվելով մանկավարժական աշխատանքով՝ նա նաեւ գործնականորեն էր զգացել աշխարհաբարով վեպ գրելու անհրաժեշտությունը: «Վերք Հայաստանին» դարձավ այդ լեզվով գրված առաջին գեղարվեստական



վեպը, որը եւ սկիզբ դրեց աշխարհաբար գեղարվեստական լեզվին: Այս առումով միանգամայն իրավացի է նկատել Արսեն Տերտերյանը. «Արովյանը դրել է մեր լեզվաշինարարության գիտական հիմքը՝ գրական լեզվի աղբյուրներ ցույց տալով ժողովրդական բարբառը, գրաբարը եւ օտար լեզուները: Լեզվի կուլտուրան բարձրացնելով այն աստիճանի, որ կարողանա իր տրամադրությունը հաղորդել ընթերցողին եւ այդ տրամադրությամբ վարակել նրան. Արովյանը գործնականորեն տալիս էր աշխարհաբարի հաղթանակի նախապայմանը» (*Արսեն Տերտերյան, Արովյանի ստեղծագործությունը, Երեւան, 1941թ., էջ 209*):

«Վերք Հայաստանին» ազգային ու մարդկային վեժ ճգնումների, ազնվիկ զգացմունքների ու հայրենասիրության մի հմայիչ աշխարհ է պարզում: Ինքնաճանաչման, առաջադիմության, ազգային համախմբման եւ ինքնուրույն պետականության վերականգման գաղափարներն ուղղակի հորդում են վեպում: Բայց այն գրվում է նաեւ բնության անզուգական պատկերներով ու նկարագրություններով, ժողովրդական կյանքի արտացոլման կենդանությամբ, գործող հերոսների խիզախությունը, արտահայտած մտքերի հարուստ խորհրդածություններով, բոցաշունչ հրապարակախոսությամբ եւ հեղինակային լեզվի ու պատկերավորման միջոցների բազմազանությամբ: Եվ, իրոք, որքան էլ խոր ու մեծ լինեն վեպի արժարժեք գաղափարները, դրանք ընկալելի կլինեին միայն լեզվական պատշաճ ձևի առկայության դեպքում: Ահա նաեւ այս առումով է, որ կարելի էր եւ «Վերքի» լեզուն, նրանում գործածված բառային ու պատկերային համակարգը:

Շարունակությունը՝ էջ 4

ԱՎՈՒՆՔԻ ԽՈԳԵՆՈՐ-ՄՉԱԿՈՒԹՅԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԲԱՑՈՒՄԸ

Դեկտեմբերի 15-ին Կոտայքի թեմի Ավուք գյուղում կատարվեց Սբ Կարապետ եկեղեցուն կից կառուցված խոգեւոր-մշակութային կենտրոնի բացման հանդիսավոր արարողությունը: Բացումը կատարեց Կոտայքի թեմի առաջնորդ Առաքել արք. Զարամյանը: Բացմանը ներկա էին կենտրոնի բարերար, ծնունդով ակունքից, այժմ ռուսաստանաբնակ Նորիկ Պետրոսյանը, Կոտայքի մարզպետ Կովալենկո Շահգալյանը, պաշտպանության փոխնախարար պրն Հայկազ Բաղմանյանը, պետական պահպանության գլխավոր վարչության պետ Ռոմիկ Մկրտումյանը, բազմաթիվ պետական եւ զինվորական բարձրաստիճան պաշտոնյաներ: Ներկա էին ողջ Ավուք համայնքը, հարակից գյուղերի համայնքապետերը եւ գյուղերի բնակիչները: Առավոտյան ժամը 11-ին մատուցվեց Պատարագ. պատարագիչն էր Տեր Մինաս աբեղա Հախվերդյանը:



Բացումից հետո կենտրոնում գեղեցիկ միջոցառում ցուցադրեցին Ավուք գյուղի Սբ Ներսես կիրակնօրյա դպրոցի սաները: Այսուհետեւ ելույթով հանդես եկավ «Մատուք» ազգագրական երգի-պարի համույթը: Այսուհետ այս կենտրոնում գործելու են Ավուքի կիրակնօրյա դպրոցը, հո-

գեւոր երգչախումբը, դաշնամուրի, նկարչության, ասեղնագործության խմբակները: Միջոցառումը եզրափակեց Առաքել սրբազանը՝ իր օրհնության խոսքով:

Լրատվական կյութերը՝ ՄԱՅՐ ԱՅՐՈՒ ՍԲ ԷԶՄԻՎՃՆԻ ՏԵՐԵԿԱՆՑԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

ՂՈՒԿԱՍ Ա ԿԱՐՆԵՋԻ (1780-1799)

Սկզբը՝ թիվ 21-23


Երբ Չաքարիան կրկին պատ-
րիարք դարձավ, Ղուկասի կաթո-
ղիկոսության խնդիրը վերջնա-
կանապես փակված էր, եւ վերա-
դարձն անհնարին էր: Նա ստիպ-
ված էր դրան համակերպվել, սա-
կայն Էջմիածնին հակադրվելը
նրա սրտում դեռ չէր մարել: Իր
հակակրանքը տարածել էր նաեւ
Սիմեոնի վրա՝ իմանալով, որ նա
է Ղուկասին առաջադրել կաթո-
ղիկոս: Ուստի չկարողանալով այլ
բանի ձեռնարկել՝ նա 1784 թվի
հունվարի 26-ին պատրիարքա-
նիստ Սբ Աստվածածին Մայր Ե-
կեղեցում Սիմեոնի տոնացույցի
կապակցությամբ ազգային ժո-
ղով գումարեց: Ժողովը որոշեց
հին տոնացույցի կիրառությունը
վերականգնել՝ երկու պատճա-
ռաբանությամբ. Հայաստանյան
Եկեղեցին անփոփոխ պահելու եւ
սրբազան հայրապետների տո-
նացույցն անփոփոխ պահելու
համար: Հայրապետների կար-
գում հիշվում է նաեւ Սարգիս
Շնորհալին, որ երբեք առնչու-
թյուն չի ունեցել տոնացույցի հետ
եւ հայրապետ էլ չի եղել: Որոշ-
ման համաձայն՝ հին տոնացույցը
նորից տպվեց 1785 թվի օգոստո-

սի 11-ին: Սկսեցին առաջնորդվել
դրանով: Սիմեոնյան տոնացույ-
ցը, որ գործածության մեջ էր
մտել 1777-ին, այն էլ՝ Չաքարիա-
յի հավանությամբ, հազիվ թե
դրանից հետո չկիրառվեր: Տոնա-
ցույցի խառնակ կիրառությունը
տեղ գտավ հենց Չաքարիայի
պատրիարքության շրջանում: Եվ
երբ նրան բերում էին Սիմեոնի
տոնացույցը, նա այն գաղտնի
այրում էր: Այդ դրությունը շարու-
նակվեց յոթ տարի, սակայն Չա-
քարիայի մահից հետո Սիմեոնի
տոնացույցի կիրառությունը վե-
րականգնվեց:

Չաքարիան հայերի մեջ ու-
սումնական գործին զարկ տալու
համար դարեվանք ստեղծեց Ար-
մաշի Չարխափան Սբ Աստվա-
ծածնի վանքում, որը մայրաքա-
ղաքից շատ հեռու չէր եւ գտնվում
էր Նիկոմիդիա քաղաքի շրջակայ-
քում: Արմաշի վանքն այդ ժամա-
նակ պարզապես վերածվել էր ա-
ռաջնորդարանի: Արմաշը դար-
ձավ նշանավոր ուխտատեղի:
Դրան նպաստեց նաեւ պատ-
րիարք Նայանի, Չաքարիա Վա-
նեցի, Հարություն Կրետացի, Ա-
թանաս Կ. Պոլսեցի եւ Պետրոս
Ղափանցի եպիսկոպոսների գոր-
ծունեությունը: Պետրոս Ղա-
փանցին մահացավ զառա-
մյալ տարիքում՝ 1784 թվի
մարտի 20-ին, Նիկոմիդիա-
յում՝ իրեն աշակերտ ու օգ-
նական ունենալով բուռն
բնավորության եւ համառ
գործելակերպի տեր Հովա-
կիմ եպիսկոպոսին: Նիկոմի-
դիացիները, Հովակիմի բռ-
նություններից զայրացած,
Չաքարիայից նոր առաջնորդ
խնդրեցին, երբ Ղափանցին
տակավին ողջ էր: 1781 թվին
Չաքարիան կարգադրեց
Պետրոս Ղափանցուն Հովա-
կիմի հետ տեղափոխվել
Բանդրամ, իսկ իր աշակերտ-
ներից Բարթողիմեոսին նշա-
նակեց Արմաշի եւ Նիկոմի-
դիայի առաջնորդ: Սակայն
Պետրոսը չմեկնեց՝ օգտվելով

մայրաքաղաքում տիրող շփոթ
վիճակից եւ պատրիարքի փոխ-
վելուց: Չաքարիան էլ վերադառ-
նալուց հետո չէր կամեցել իսկույն
բռնանալ՝ հարգելով, հավանա-
բար, Պետրոսի ծերությունը: Երբ
Պետրոսը մահացավ, Հովակիմն
աշխատեց նրա հաջորդը դառ-
նալ՝ դիմելով խուժանական խմ-
բերի եւ պաշտոնյաների պաշտ-
պանությանը: Այդ վիճակին
պետք էր վերջ տալ, եւ 1786 թվի
հունվարի 8-ի հրամանով՝ Բար-
թողիմեոսն ուղարկվեց Նիկոմի-
դիա: Նա Հովակիմին վտարեց,
նրա կողմնակիցներին զսպեց եւ
խաղաղեցրեց դրությունը:

Բարթողիմեոս Կապուտիկը
կամ Կապուտիկյանն այդ մակա-
նունն ստացել էր կապույտ աչքե-
րի համար: Նա բնիկ պոլսեցի էր՝
ծնված 1749 թվին, աշակերտել էր
Չաքարիային եւ աստիճաններն էլ
նրանից ստացել, միշտ եղել էր
նրա գործակիցը, իսկ 1775 թվին
Սիմեոնը նրան ձեռնադրել էր Ե-
պիսկոպոս: Չաքարիան Բարթո-
ղիմեոսին հանձնարարեց Արմաշը
կատարյալ վանական միաբանու-
թյան եւ ուսումնական հաստա-
տության վերածել: Սակայն Ար-
մաշն ավեր վիճակում էր՝ վերջին
իրադարձությունների պատճա-
ռով: Ուստի նա ավելի շատ նորո-
գողի դերում հանդես եկավ: Այնու-
հետեւ նա ձեռնամուխ եղավ վա-
նական միաբանության կազմա-
կերպմանը: Այդ գործը հեշտ չէ-
ղավ: Զուտ անձինք նրան մեղադ-
րեցին, թե նրա կառուցածը 366
սենյակներով, ամուր պարիսպնե-
րով եւ զենքերով լեցուն մի դղյակ
է: Զստությունը հետեւանքներ ունե-
ցավ, քանի որ պատերազմ էր մղ-
վում Ռուսաստանի դեմ: Զննու-
թյունը ցույց տվեց, որ բանսար-
կությունը սուտ է, սակայն շինու-
թյունը շարունակելու համար կա-
րիք եղավ նոր հրովարտել: Այն
ուշ ստացվեց. միայն 1797 թվի
սեպտեմբերի 13-ին տեղի ունե-
ցավ տաճարի նավակատիքը:
Բարթողիմեոսը կատարեց ու-
սուցչի հանձնարարությունը



նույնպես՝ աշակերտական խումբ
հավաքելով Արմաշում: Ինքն էլ
զբաղվեց նրանց դաստիարակու-
թյամբ: Աշակերտներից առնվազն
տասն առավել օգտակար են եղել
Նիկոմիդիային, Պրուսային եւ շո-
ջակա վիճակներին:

Հայտնի է, որ Ղուկաս կաթո-
ղիկոսը եւ Չաքարիա պատրիար-
քը մահացան 1799 թվին՝ մեկը
մյուսից ինն ամսվա տարբերու-
թյամբ: Հետաքրքիր է, թե ինչ կա-
ցություն էր տիրում այդ ժամա-
նակ մյուս աթոռներում: Ինչպես
նշեցինք, Սսի կաթողիկոս Գաբ-
րիել Աջապահյանի սպանությու-
նը կատարվեց 1770 թվի սեպ-
տեմբերի 10-ին: Մի պահ աթոռը
թափուր մնաց, մինչեւ որ Մարկոս
քահանա Աջապահյանի որդին՝
Եփրեմ եպիսկոպոսը, որ վերջին
երեք կաթողիկոսների եղբորոր-
դին էր, կարողացավ Ադանայի ա-
պաստարանից գալ եւ 1771 թվին՝
Գաբրիելի սպանությունից շատ
չանցած, տիրանալ Սսի աթոռին:
Մի ինքնակոչ կաթողիկոս էլ
հայտնվեց՝ Եղիազար անունով,
որին նույնպես Աջապահյան են
կոչում, չնայած Ղ. Ալիշանը նրան
իր ճյուղահամարում չի ընդգրկել:
Ուստի պարզ չէ, թե նա ինչ ազ-
գակցություն ուներ Եփրեմի հետ:
Մ. Օրմանյանը հակված է կարծե-
լու, որ Մարկոս քահանայի մյուս՝
չորս եղբայրներից մեկի որդին էր
եւ նախորդ երեք կաթողիկոսների
մեկ այլ եղբորորդին: Եփրեմը
գրել է Սսի Աջապահյան տոհմի եւ
այդ տոհմից եղած կաթողիկոսնե-
րի պատմությունը, որը բացի մի
ոտանավոր քաղվածքից՝ հրա-
տարակված չէ: Բասմաջյանի
խոսքերով՝ Եղիազարը գալիս է Կ.
Պոլիս՝ հաստատելու իր կաթողի-
կոսությունը, ասում է նաեւ, թե

Եփրեմյանների եւ Եղիազարյան-
ների միջեւ երկպառակություն է
եղել: Բասմաջյանը գիտեր, որ օ-
րինական կաթողիկոսը Եփրեմն է
եւ փորձել է դիմադրել Եղիազարի
ձգտումներին: Թե հետո ինչպես
զարգացավ այդ հակառակությու-
նը, հայտնի չէ: Միայն գիտենք, որ
Եփրեմը կաթողիկոսեց մինչեւ
1784 թվը՝ սպանվելով Սսի բռ-
նակալի կողմից. Կոզանօղլունե-
րի ցեղապետը նրան թունավորել
տվեց: Դա հուլիսի վերջերին կամ
օգոստոսի սկզբներին էր: Սեպ-
տեմբերին եղավ նոր կաթողիկո-
սի ընտրությունը, որ աթոռը թա-
փուր չմար: Սա նույնպես Աջա-
պահյանների տոհմից էր՝ Թեոդո-
րոս անունով: Նա հավանաբար
Եփրեմի հորեղբորորդին էր: Հար-
կավ Եղիազար հակառակ կաթո-
ղիկոսն այլեւս ողջ չէր: Ընտրու-
թյունը եղավ Կ. Պոլսում՝ Կիլի-
կիայի թեմի ողջ հոգեւորականու-
թյան ու ժողովրդի համաձայնու-
թյամբ: Կիլիկիայի շփոթ վիճակի
պատճառով օծումը նույնպես Ե-
ղավ Կ. Պոլսում՝ 1784 թվի սեպ-
տեմբերի 6-ին՝ Խաչի բարեկե-
դանի նախընթաց ուրբաթ օրը: Օ-
ծումը կատարվեց Գում-Գափուկ
Մայր եկեղեցում՝ առանց շատերի
գիտության, անշուք, որ ազգը
դրանից վնաս չկրի: Այն կատարել
են հինգ եպիսկոպոս եւ յոթ վար-
դապետ: Օծմանը նախագահել է
Չաքարիա պատրիարքը, սակայն
իրեն 12 եպիսկոպոսներից դուրս
է համարել: Ասվում է, թե Թեոդո-
րոսը հանձն չէր առնում կաթողի-
կոսությունը, սակայն Չաքարիան
եւ ազգի մեծավորները նրան հա-
մոզել են: Թե ինչ գործեր է արել,
հայտնի չէ: Նա մահացավ 1791
թվին, ըստ այլ տեղեկություննե-
րի՝ 1801-ին: Նրան էլ խոշտանգե-
լով սպանեցին Կոզանօղլուները՝
Սսի պարսպից դուրս՝ գետի
կամրջի վրա: Սպանության թվա-
կանը, այնուամենայնիվ, պետք
է համարել 1791-ը, ինչպես գրված
է տապանաքարի վրա: Նրա հա-
ջորդը եղավ նրա եղբորորդին՝
Կիրակոս Աջապահյանը՝ 1791
թվից: Բռնակալները, սպանելով
կաթողիկոսին, նորի ընտրությա-
նը չէին խանգարում՝ իրենց հա-
մար նոր որս դիտելով:

Շարունակելի
Բաբկեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
33 ԳԱՍ թղթակից անդամ,
պրոֆեսոր

Մարկեւսի ՕՒԵՍՆԻՅԿԻ

Հարստությունը ու աղքատու-
թյունն ինքնին բարոյապես չեզոք
են, այսինքն՝ միայն հարստու-
թյունը կամ միայն աղքատությու-
նը մարդուն չեն դարձնում լավ
կամ վատը: Ամեն ինչ կախված է
մարդու վերաբերմունքից եւ
հարստության կամ աղքատու-
թյան հետ նրա կապվածություն-
ից, քանի որ Եկեղեցու կողմից
հռչակված սրբերի կարգն են
դասվել թե՛ հարուստներ եւ թե՛
աղքատներ: Հարստությունն ու
աղքատությունն ունեն ինչպես ի-
րենց օգուտն ու առավելություն-
ները, այնպես եւ վտանգն ու գայ-
թակցությունները: Պատահական
չէ, որ Առակաց գրքում հետեւյալ
աղոթքն է ասվում առ Աստված.
«Երկու բան եմ խնդրում Զեզա-
նից. մինչեւ մեռնելս չգրկես քո
շնորհներից: Չուր եւ սուտ խոսքը
հեռու վանի՛ր ինձանից: Հարս-
տություն եւ աղքատություն մի՛
տուր ինձ, այլ ինձ համար կշռիր
արժանին, որ բավական է: Չլինի
թե հարստանամ եւ ուրանամ
Զեզ ու ասեմ. «Ո՞վ է ինձ տես-
նում». կամ աղքատանամ ու բան

գողանամ եւ երդում ուտեմ իմ
Աստծու անունով» (Առակ. Լ 7-8):
Ինչպես տեսնում ենք, Սուրբ Գր-
քում նյութական միջին բարեկե-
ցությունը ներկայացված է որ-
պես ամենանպաստավոր բարո-
յական առումով:

Այն, որ հարստությունը կամ
ընդհանրապես ունեցվածքը դա-
տապարտելի չեն քրիստոնյայի
համար, երեւում է, երբ Աստված
Ինքը մարդուն պատվիրում է տի-
րել աշխարհին եւ իշխել դրա
վրա (Ծննդ. Ա 26, Թ. 1): Ցանկա-
ցած ինչք երկրի պտուղն է: Ու-
նեցվածքին տիրելը պայմանա-
վորված է մարդու հոգեւոր դաս-
տիարակության անկախության
եւ ինքնուրույնության չափավոր
ձեռքբերման հետ, որոնք հիմնա-
կանում անհրաժեշտ են երկրա-
յին կյանքի կամ համակեցության
համար: Սակայն տիրելով ունեց-
վածքին՝ հարկավոր է ներքուստ
անկախ լինել դրանից եւ չգայ-
թակղվել. «Եթե հարստությունն
ամփ պես իսկ հոսի, թող ձեր սր-
տերը չցանկանան» (Սաղմ. ԿԱ
11): Ոչ թե հարստությունը պետք

է տիրի մեզ, այլ մենք տիրենք
դրան, ազատ տնօրինենք եւ օգ-
տագործենք բարի գործերի հա-
մար: Անազնիվ ճանապարհով
ձեռք բերված հարստությունն ու
դրա մեղսավոր օգտագործումն
արտահայտվում են հետեւյալ
կերպ՝ շահամոլություն, ժլատու-
թյուն, ցուրտություն եւ հարստու-
թյան հույսով բարոյական անհո-
գություն: Սուրբ Գիրքը դատա-
պարտում է շահամոլությունն ու
ժլատությունը՝ անվանելով կռա-
պաշտություն (Կող. Գ 5): Կռա-
պաշտները չեն ժառանգելու
Աստծո արքայությունը (Ա Կորնթ. 2 10): Չեն կարող ծառայել Ե՛ւ
Աստծուն, Ե՛ւ մամոնային (Մատթ. 2 24): Որպես ցուրտության կամ
շվայտության օրինակ՝ Սուրբ Գր-
քում ներկայացվում է անառակ
որդու կյանքը. «Վատնեց իր ու-
նեցվածքը, որովհետեւ անառակ
կյանքով էր ապրում» (Ղուկ. ԺԵ
13): Ավետարանում հարստու-
թյան հանդեպ խաբուսիկ հույսի
եւ բարոյական անհոգության օ-
րինակ է ներկայացված մեծահա-
րուստը, որն ապավինելով բա-



րիքների առատությանը՝ ասաց
ինքն իրեն. «Ո՞վ մարդ, շատ տա-
րիների համար ամբարված բա-
րիքներ ունես, հանգի՛ստ արա,
կե՛ր, խմի՛ր եւ ուրա՛խ եղի՛ր»
(Ղուկ. ԺԲ 19): Պողոս առաքյալը
պատվիրում է Տիմոթեոսին՝ հոր-
դորել քրիստոնյաներին «չապա-
վինել սնոտի հարստությանը,
այլ՝ Աստծուն, որ մեզ առատա-
պես ամեն ինչ տալիս է վայելելու
համար» (Ա Տիմ. 2 17):

Ունեցվածքի ձեռքբերման եւ
ազնիվ ճանապարհով հարստա-
նալու բարոյական աղբյուրն Ա-
դամի օրինակն է. «Զո երեսի քո-
տիկնքով ուտես հացդ մինչեւ հող
դառնալով, որից ստեղծվեցիր, ո-
րովհետեւ հող էիր եւ հող էլ
կդառնաս» (Ծննդ. Գ 19): Քրիս-
տոնյայի հարստանալու աղ-
բյուրն աշխատանքն ու խնայո-
ղությունն են:

Շարունակությունը՝ էջ 7

ԹԱՏԵՐԳՈՒԹՅՈՒՆ

Սկիզբը՝ թիվ 22-23

Նույն այս հարցերին Ե նվիրված Նաեւ Ա. Զաւարթարյանի «Բացեք ձեր աչքերը» դրաման: Վերստին արծարծվում են հայրենիք-սփյուռք, հայրենադարձություն եւ արտագաղթ կենսական

սարդներ են, որոնց կյանքի թեւեւ ազատ, բայց մաքուր բարքերը, երազանքներն ու ռոմանտիկան



հարցերը, բայց եւ վերստին ամեն ինչ մնում է խորությամբ լիարժեքորեն չբացահայտված:

Ժամանակակից կյանքը հոգեբանական բեկվածքով է պատկերված արձակագիր **2. Խալափյանի** «Օրորոցային» (1968) եւ «Տարբեր նվագներ» (1972) դրամաներում: Երկու դեպքում էլ ներկայացվում են կյանքում իրենց տեղը որոնող մարդկային ճակատագրեր: Ստեղծված դրամատիկ վիճակները ձեւավորվում են առօրյայում, առտնին հարաբերությունների մեջ եւ արտաքուստ, կարծես, այնքան էլ սրված ու բախտորոշ բնույթ չեն կրում: Դա արտաքուստ, բայց ըստ էության՝ պարզվում է, որ հենց առօրյա այդ վիճակներում էլ մարդն ապրել է իր կյանքի ճակատագրական պահը՝ գտել է իր սերը կամ կորցրել, հաստատել է իր սկզբունքները կամ տանուլ տվել: «Օրորոցային» դրամայի հերոսները 20-25 տարեկան երիտա-

անհանդուրժելի են դառնում ավագների համար: Ձեւավորվում է կյանքի ըմբռնման տարբեր սկզբունքների բախում, որն ավելին է, քան սոսկ սերնդային մտածողության հակադրությունը, որովհետեւ սերունդների միջեւ ճիշտ փոխըմբռնման դեպքում միշտ էլ հոգեւոր կապ է ստեղծվում: Այս դեպքում կասկածամիտ ու չար բնագոյների տեր «վերահսկիչները» ծաղրում են երիտասարդներին, զգուշացնող հրահանգներ ուղարկում նրանց աշխատանքային վայրերը եւ, ի վերջո, խայտառակում թերթում: Իսկ ի՞նչն էր պատճառը. պատճառ, ըստ էության, չկար, կար անվստահություն՝ իրար գլխի հավաքվող երիտասարդ մարդկանց հանդեպ: Եվ այդ անվստահությունն էլ կործանում է նրանց ռոմանտիկան: Դրամայի երիտասարդ հերոս-հերոսուհիները (Անահիտ, Միքայել, Արտաշես, Թորոս, Շուշան, Շաքե) իրենց չարած մեղքերի հա-

ՉԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1960-1980-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

մար ստիպված են արդարանալ Սիմոնյանի, Սկուտարյանի ու Միսակի պես մանրահոգի մարդկանց առջեւ, ովքեր գաղտնի հետեւել են նրանց:

Երիտասարդների մեջ իր չապրած երազանքներն է որոնում տարիքով նրանցից քիչ ավելի մեծ Մամիկոնը, որին, սակայն, նշված վերահսկիչներն ու կինը աստիճանաբար գամում են կյանքի ամենօրյա հոգսին: Այս կերպարների եւ ընդհանրապես ամբողջ դրամայի մեջ հեղինակը հուշում է գլխավոր միտքը. այն, որ մարդու կյանքն առանց ապրելու բերկրանքի անցնում ու դառնում է գորշ, գետնաքարշ առօրյա:

Առօրյայում կործանվող սիրո մի պատմություն է ներկայացնում «Տարբեր նվագներ» դրաման: Հարեան երկու տների երիտասարդների միջեւ դեռեւս դպրոցական տարիներից ձեւավորված մաքուր սերը չի հասնում տրամաբանական ավարտի: Մի բան միշտ խանգարում է Լիպարիտին ու Չարուհուն: Պատճառը ոչ այնքան երկու տների գծությունն է, որքան առօրյա հարաբերությունների, խոսք ու գրույցի մեջ մանրացող զգացմունքը, որը թեւեւ չի կորչում, բայց աստիճանաբար իրարից հեռացնում է երիտասարդներին: Հոգեբանորեն համոզիչ է Նաեւ անհույս սիրահար, որը ու անտեր Վարդանի կերպարը, որը, հանուն Չարուհու անգամ բանտարկվելով, ի վերջո, նույն որբի համառությամբ հասնում է իր նպատակին: Աղջիկն առանց սիրո ամուսնանում է նրա հետ եւ հեռանում հայրական տնից: Այս իրադարձություններին ակնատես ու մասնակից են թաղի մարդիկ՝ հարեանները, թաղային տեսուչը, որոնք կարծես հանդիսականներ ու վկաներ լինեն:

Ժամանակակից կյանքի գեղարվեստական պատկերման հաջողված փորձ է Ա. Ծափիյանի «Տրամվայը պարկ է գնում» (1969) դրաման, որը հեղինակը բնորոշել է որպես «մարդկային կատակերգություն»՝ մի քանի կանգառով: Թե՛ այս «մարդկային կատակերգություն» բնութագիրը, թե՛ դրամայի ամբողջ շունչն ու ներքին տրամադրությունը գալիս են Վ. Սարոյանից, որի բարերար ազդեցությունն ակնհայտ է Ա. Ծափիյանի ամբողջ ստեղծագործության վրա:

Գիշերային ուշ ժամի տրամվայը հանգրվանի է գնում: Վերջին ուղևորներն են, բայց եւ նրանց ճանապարհը երկար է: Մեքենավարը, որ ոչ մի տեղ չունի շտապելու, քանի որ տանը սպասող չկա, որ բարի ու սրտացավ մարդ է, այդ ուշ ժամին մի ավելորդ պտույտ էլ է անում քաղաքում եւ տեղ չհասած՝ սրտի ծակոցից մահանում ղեկի վրա: Մինչ այդ ուղևորներն են բարձրանում ու իջնում, գրուցում իրար հետ, իսկ մեքենավարը կանգառից կանգառ լուռ ու աննկատ ստեղծում է մարդկային շերմության այն անհրաժեշտ մթնոլորտը, որը եւ կարգավորում է ամբողջ դրամայի ներքին տրամադրությունը: Պայմանական վիճակի մեջ դրված գործողությունների այս շարժումն աստիճանաբար բացահայտում է մարդկային բնավորություններ ու ճակատագրեր. մեծ ընդհանրացումով դեմ դիմաց են կանգնում բարին ու չարը, հավատն ու աստվածուրացությունը, սերն ու ատելությունը, վստահությունն ու կասկածը: Եվ դա կյանքի չկայունացած, պարտադրանքի չվերածված վիճակներում, երթելի մի քանի կանգառներում: Եվ հենց այդ ակնթարթների մեջ է, որ մերկ ու անթաքույց երեւում է մարդը: Գուշակություններ աւող ծերունին բախտ է բաժանում եւ մարդկանց մեջ, ինչպես ինքն է

ասում, սեր ու ողորմածություն փնտրում: Ավարտված մարդը վիրավորված է, որ թոռան ծնունդին նվեր տարած ակվարիումը որդին ձեռքն է տվել եւ ետ ուղարկել՝ ասելով. «Ետ տար քո ձկները, ես չեմ ուզում, որ թոռդ էլ քեզ նման ապրի աշխարհում»: Հարբուխով մարդը կասկածոտ ու թունավոր խեղճում է աշ ու ծախ, իսկ անհամբեր մարդը նրա հասցեին այս խոսքերն է շարտում. «Դուք ճիշտ եք... Նույնիսկ չափից ավելի ճիշտ. ինչպես երկու անգամ երկու... Բայց ես թեք եմ ձեր այդ ճշմարտության վրա... ինձ՝ մահկանացուիս, մի փոքր սուտ է պետք, հասկանո՞ւմ եք, մի փոքր սուտ, որ կարողանամ ապրել չափից ավելի այս ճիշտ աշխարհում»: Մեկն աղջկա նշանդրեքին է շտապում, մեկ ուրիշ աղջկա, անառակ ասելով, հայրը տնից դուրս է վռնողում, մեկ այլ հուսախաբված աղջիկ էլ կամրջից ուզում է իրեն վար նետել, մեկը վաղը պիտի բանակ գնա, մյուսը՝ երկու տարի սպասի նրան: Սպասի ու պահպանի իրեն, որովհետեւ «ցեխոտ ոտքերով խցկվում են հոգուդ մեջ, փշրում են ե՛ւ հույս, ե՛ւ երազանք, տրորում, ապականում ամեն ինչ»: Սա կյանքի խճանկարն է, որ կյանքի այլ հարաբերություններում դժվար թե ի մի բերվեր: Տրամվայի խոհրդանիշն այս դեպքում դառնում է շարժվող, հոսող, բազմազեղուն կյանքի խտացած ընդհանրացում: Իսկ բոլոր նրանց համար, ովքեր մեքենավար Արամի պես մտքով խոսում են մեռած հարազատների հետ, իրենց սերն ու կարեկցանքը բաժանում մարդկանց եւ խոնարհ տանում իրենց ցավը, Նա պահում է մի թանկ հոգեւոր կապ. «Տվեք ինձ ձեր հասցեն, ես ուզում եմ նամակներ գրել ձեզ բանակից...»: Այսպես, մարդկանց հարազատեցնող նամակներ էին գրում Նաեւ Վ. Սարոյանի հերոսները:

Շարունակությունը՝ էջ 5

ԼԵՃՎԱՐՏԱՆՅՈՋԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ Խ. ԱՐՈՎՅԱՆԻ «ՎԵՐՔ ՆԱՅԱՍՏԱՆԻ» ՎԵՊԻ «ՉԱՆԳԻ» ՆԱԿԵԼՎԱԾՈՒՄ

Սկիզբը՝ էջ 2

Արովյանի վեպը բացառիկ գրական երկ է՝ ուրույն կառուցվածքով: Նրա կարեւորագույն առանձնահատկություններից մեկը հեղինակի ներկայությունն է վեպում, որն ընթերցողը զգում է առաջին էջից մինչեւ վերջինը: Արովյան իր վեպը գրում է, իր բաներով սասած, «մաշվելով, գլուխը մահու տալով, գծվածի պես»: Զե՞ որ Նա գրում էր իր «սիրեկան ազգի» համար: Ու հենց դրա համար է, որ Նա անընդհատ «լեղապատառ» ձայն է տալիս, աղաղակում, որ հայոց մեծ ազգի վրա այլեւս ոչ մեկն ի վիճակի չլինի թուր հանելու: Չկարողանալով անտարբեր լինել իրեն հուզող բազմաթիվ խնդիրների հանդեպ՝ վիպասանը հաճախ ընդհատում է բուն պատմությունը, եւ ինքը խոսում ընթերցողի հետ: Վիպասանի կողքին միշտ ներկա է հրապարակախոսը, մեծ քաղաքացին, որը մե՛րթ բարկանում է, մե՛րթ մեղմանում, մե՛րթ ըմբոստանում: Առաջին հայացքից վեպի սյուժեի հետ առնչություն չունեցող այդ «շեղումները» իրականում ոչ միայն չափազանց կենսական են վեպի համար, այլեւ պատկերվող գործողությունների առաջ մղիչն են, ինչով էլ պայմանավորվում է երկի բացառիկ անկեղծ ու անմիջական շարդարանքը, այլ խոսքով՝ վեպի լեզվական համակարգը, նրա ռճական առանձնահատկությունները:

«Վերք Հայաստանի» լեզվական համակարգը, ռճական հնարանքների ու միջոցների հմուտ ու տեղին գործածությունը, գեղարվեստական պատումի այլ հնարանքները Արովյանի վեպը բարձրացրել են բանաստեղծական աստիճանի», - իրավացիորեն գրել է Լեւոն Եզեկյանը (*Լ. Եզեկյան, Գրական աշխարհաբարը եւ արեւելահայ պատմավեպի լեզուն, Երեւան, 1990 թ., էջ 267*): Ըստ հարկի առավելություն տալով այս կամ այն ռճական ու լեզվական տարրերին՝ հեղինակը Նաեւ այդ լեզվական միջոցների կիրառմամբ է հաճախ հասնում իր հետամտած գաղափարների թողած տպավորություններին:

«Վերք Հայաստանին» Արովյանի ոճամտածողական ինքնատիպության, զգացմունքային բուռն ներաշխարհի ու հոգեկան վիճակի հարազատ արտահայտությունն է՝ դրսեւորված վեպի բոլոր հատվածներում: Իր հոգեկան այդ գերլարված վիճակի մասին վկայություն է տալիս Նաեւ ինքը. «Ճանճը առաջովս անց կենալիս ուզում էի սպանեմ, Էնպես էի վառվել: Հայաստանը հրեշտակի պես առաջիս կանգնել, ինձ թեւ էր տալիս» (էջ 10):

Հեղինակի կրակված սրտի ու մտքի ծնունդ լեզվաարտահայտչական բազում միջոցներ (հիշենք Աղասու եւ Հասան խանի հանդիպման հատվածը, Անի քաղաքի մասին խորհրդածությունները եւ այլն) ուղղակի սփռված են ամբողջ վեպի

էջերով, սակայն այն լեզուն, պատկերավորման այն բուռն ընթացքը, գույների այն թանձրությունը, բնութագրումների այն կտրականությունը, որ առկա են վեպի «Չանգի» վերնագիրն ունեցող հավելվածում, անսախաղեպ են: «Չանգին» սկզբում եղել է առանձին ստեղծագործություն, որը բաղկացած էր աշխարհաբար արձակ էջերից եւ գրաբար չափածո հատվածից (*Գրականագետ Պիոն Հակոբյանը «Չանգի» հավելվածը բնութագրել է «այլաբանական խորհրդածություններ» (տե՛ս Խ. Արովյան, Երկեր, Երեւան, 1984, էջ 708): Մեր կարծիքով՝ այն խորհրդածություններ անվանելը մասամբ թերի է, քանի որ ամբողջը գրված է պոեթիկոս պաթոսով եւ ըստ էության ավելի դասողություններ, բնորոշումներ, անգամ խորհուրդներ են, որոնց վկայություններից էլ բառապաշարն ու բառօգտագործումն են*):

Հետագայում Արովյանն ստեղծել է Նաեւ սյուժետային մաս, որը հանգեցրել է ամեն ինչ հայրենիքի ու հայ ժողովրդի վիճակի բարելավման գոհաբերության պատգամին, եւ այդ հատվածը մտցրել իր վեպի մեջ: Չոպանյանն Արովյանի հարյուրամյակի առիթով գրված իր հոդվածում «Չանգիի» մասին գրում է. «Կտորը հոյապատ է արդարեւ. անոր մեջ կը տեսնենք խտացած Արովյանի բոլոր յարակրթությունները. այդ էջը միայն պիտի բաւեր ապահո-



վելու Արովյանի անմահութիւնը» (*«Անահիտ» հանդես, 1906 թ., թիվ 1-2*):

«Չանգին» ստեղծվել է երկար ու տքնաջան աշխատանքի, լեզվառճական բազմաթիվ փոփոխությունների արդյունքում: Այստեղ շարունակում են գործել երկի երկու հերոսները (Հարություն, Նազու), ինչպես Նաեւ ավարտին են հասնում վեպի մի քանի կարեւոր գաղափարներ: «Չանգի» հավելվածի հիմնական գաղափարն այն է, որ հեղինակը Չանգի (Հրազդան) գետի խոլական ընթացքի, ահեղ ալիքների թնդունի, ափերին զարնվելու եւ ճանապարհին ամեն բան տակնուվրա անելու կարողության մեջ խտացնում է հայրենիքի ուժն ու վճռականությունը:

Շարունակելի
ԱՍԻ ՍՍՏՐՅԱՆ

ԵՐԻՍ ԲՈՂԱՆՅԱՆ

Վիպասանը ցեղասպանությունից գրեթե մեկ դար անց թուրքական մի գյուղում հանդիպում է Ասյա անունով հայուհու:

Անցած ամիս հարավարեւելյան Թուրքիայում հանդիպեցի մի կնոջ: Այդ կնոջը, հավանաբար, ապրելու շատ ժամանակ չի մնացել: Լրատվամիջոցները դժվար թե տեղեկացնեն նրա վախճանի մասին, եւ մի քանի չունքուշցիներից բացի՝ ոչ ոք չի հիշի նրան: Նույնիսկ բարեկամները, ովքեր սիրում են նրան, հավանաբար կմտածեն. «Դե նա արդեն 98 տարեկան է կամ էլ՝ 99: Հնարավոր է, որ նա ողջ մնա մինչեւ 2015 թ.: Նա իրոք շատ երկար է ապրել»:

Ես Ասյային հանդիպեցի մայիս ամսին: Նրա դուստրն ինձ հյուրասիրեց քրդական թունդ թեյով եւ իրենց այգուց հավաքած թարմ ելակով: Երբ մի օր կրկին այցելեմ այդ գյուղը եւ իմանամ, որ Ասյան մահացել է, չեմ կարողանա զսպել իմ հուզմունքը: Իսկ ինչո՞ւ պետք է հուզվեմ մի կնոջ մահվան համար, որին ընդամենը մի անգամ եմ հանդիպել, եւ ով ամբողջ մի կյանք է ապրել եւ իմ խոսքերից էլ մի բառ անգամ չէր հասկանում: Նա միայն թուրքերեն էր խոսում: Դա մի լեզու է, որին ես չեմ տիրապետում: Ես ընդամենը երկու բառ գիտեմ թուրքերեն՝ «խնդրեմ» եւ «շնորհակալություն»:

Ես, անշուշտ, կհուզվեմ Ասյայի մահվան առիթով, քանի որ նա, այսպես կոչված, «ծայտյալ» հայերից է: Նա վերջին ողջ մնացած հայն է՝ Չունքուշ գյուղում:

Ես հանդիպեցի նրան, երբ ամերիկահայ իմ վեց ընկերների հետ ճանապարհորդում էի Թուրքիայի այն շրջանում, որին շատ հայեր, այդ թվում եւ ես, պատմական Հայաստան ենք կոչում: Դա մի շրջան է, որն այժմ հիմնականում քրդաբնակ է, սակայն 98 տարի առաջ քրդերից բացի՝ այստեղ բնակվում էին թուրքեր, ասորիներ եւ հայեր: Մեր ճանապարհորդությունը կարծես ուխտագնացություն լինեք, որի ընթացքում մենք պետք է ծանոթանալինք հայկական եկեղեցիների ու վանքերի մնացորդներին, մի խոսքով՝ մի մշակույթի, որը ոչնչացվել էր երկրի երեսից Հայոց ցեղասպանության ժամանակ: Առաջին աշխարհամարտի ընթացքում 1 500 000 հայ կանոնավոր կերպով բնաջնջման ենթարկվեց: Այսինքն՝ Օսմանյան կայսրությունում բնակվող յուրաքանչյուր չորս հայից երեքը նահատակվել էին:

Մեր ճանապարհորդության հիևեթորդ օրն այցելեցինք Չունքուշ գյուղ, որտեղ

ՎԵՐՁԻՆ ՀԱՅԸ ՄԻ ՔԱՂԱՔՈՒՄ, ՈՐ ԳՆԱՀԱՏԱԿՎԵԼ ԵՑ ԽԱՂԱՐԱՎՈՐ ԽԱՅԵՐ



մինչեւ Հայոց Մեծ եղեռնը գոյություն ուներ 10 000 հայից բաղկացած մի ծաղկուն համայնք: Հեռվում ուրվագծվում էին հայկական եկեղեցու փլատակները: Այստեղ տեղակայված քաղաքը ժամանակին գրեթե լիովին հայաբնակ էր: 1915 թ. ամռանը՝ մի քանի մղձավանջային օրերի ընթացքում, թուրք ժանդարմները եւ քրդական ավազակախմբերը մտան գյուղ եւ գրեթե բոլոր հայերին քշեցին դեպի Դուդան կոչվող կիրճը: Այստեղ նրանց գնդակահարում, սպիտակահարում կամ էլ պարզապես նետում էին խոր անդունդը: Թուրք ժանդարմներից մեկը, հավանելով Ասյայի մորը, որ կանգնած էր կիրճի եզրին, առանձնացրեց հայերի խմբից: Ժանդարմը մտադրվել էր կնության առնել Ասյայի մորը: Այսպիսով՝ հայագգի կինը փրկվեց: Նա այն փոքրաթիվ հայերից էր, ովքեր 1915 թ. այդ ամառային օրը խույս տվեցին մահվանից:

Ես եւ իմ ուղեկիցները չէինք ակնկալում հանդիպել Ասյային, երբ ճանապարհորդում էինք դեպի Չունքուշը: Մենք պարզապես ուզում էինք տեսնել հայկական եկեղեցու փլատակները: Գյուղացիների մեծ մասը խոստովանեց, որ ժամանակին Չունքուշում հայեր էին ապրում:

Բայց երբ մենք հարցնում էինք, թե այդ հայերին ինչ է պատահել, նրանք իսկույն եւեթ ասում էին, թե իբր նրանք այլ վայր են տեղափոխվել: Սակայն ճշմարտությունն այն էր, որ նրանք դեռեւս այդտեղ էին. նրանց ոսկորները փտում էին Դուդանի խորխորատում: Մենք կարծում էինք, որ քաղաքում այլեւս ոչ մի հայ չէր մնացել: Բայց երբ մենք արդեն հեռանում էինք, սրընթաց մեր ֆուրգոնին մոտեցավ եւ ապա դուռը թակեց նիհարակազմ, խիստ հողմահար դեմքով, վաթսուսն անց մի մարդ, որը գլխին կեպի էր կրում: Մենք այդ բնակավայրում ընդամենը մի ժամ էինք անցկացրել, բայց արդեն ասեկոսե էր տարածվել, որ քաղաքում ամերիկացիներ կան: Օտարականը մեզ ասաց, որ պետք է հանդիպենք իր զոքանչ մայրիկին:

Ազգությամբ քուրդ մեր վարորդը մտավախություն ուներ, որ մեր ազատ տեղաշարժը կարող է միջազգային մասշտաբի խնդիր դառնալ. հնարավոր է, որ յոթ ամերիկացի զբոսաշրջիկներին առեւանգեին կամ նույնիսկ սպանեին, եւ օտարականն այնքան հուսահատ վիճակում էր, որ մենք որոշեցինք կատարել նրա խնդրանքը՝ հանդիպել Ասյային: Իմ ընկեր Խաչիկ Մուրադյանը, որը Միացյալ Նահանգներում հայկական շաբաթաթերթի խմբագիր է, տիրապետում էր թուրքերենին եւ կարող էր թարգմանել մեր զրույցը:

Ես նախկինում հանդիպել էի ցեղասպանություն վերապրածներին՝ ներառյալ իմ տատ ու պապին: Բայց Ասյայի հետ ունեցած հանդիպումը յուրահատուկ էր, քանի որ նա ոչ Վաշինգտոնում էր ապրում, ոչ Փարիզում եւ ոչ էլ Բեյրութում: Նա չէր հանդիսանում Սփյուռքի մի մասնիկ, որտեղ մենք սովորաբար կարող ենք հանդիպել եղեռն վերապրած մի քանի մարդկանց: Մենք տեսնում էինք մի անձնավորության, որի մայրը կոտորածի ժամանակ կանգնած է եղել անդունդի եզրին եւ տակավին ողջ էր, երբ նրա տատ ու պապը եւ հայրը, ամենայն հավանականությամբ, արդեն սպանված էին:

10 000 հայով բնակեցված քաղաքը ցեղասպանությունից հետո դարձավ 10 000 քրդով բնակեցված քաղաք:

Մեր առջեւ կանգնած էր մի կին, ում մայրը լսել էր անվերջանալի կրակոցների, անդունդի քարերին խփվող մարմինների ձայները եւ մանուկների ճիչերը:

Ասյան եւ նրա մայրն ապրեցին իրենց կյանքը՝ գիտակցելով, թե իրենք ովքեր են. հայեր, որոնք ստիպված են հարմարվել իրականությանը եւ լուռ մնալ: Դա էր այն գինը, որն անհրաժեշտ էր վճարել ցեղասպանությունից հետո ողջ մնալու համար: Անցյալի մասին լռելը մի սովորություն է, որը մինչ օրս պահպանվել է Չունքուշի նման փոքր բնակավայրերում:

Երբ Ասյային հարցնում էինք իր հայկական ծագման մասին, տխուր տարուբերում էր գլուխն ու լռում: Մի անգամ նրա դուստրը միջամտեց խոսակցությանը՝ ասելով. «Ո՛հ, մենք չենք կարող խոսել դրա մասին»:

Երբ մենք հարցնում էինք նրան, թե ինչ է մայրը պատմել իրեն կոտորածների մասին, նա հայացքն իջեցնում էր եւ շշուկով ասում. «Այդ ժամանակ ես շատ փոքր էի: Չեմ հիշում»: Երբեմն նա ասում էր. «Մայրիկս ասել է...», բայց հետո նրա ձայնը ընդհատվում էր:

Նման պահերից մեկի ժամանակ, երբ նրա ձայնը կտրվեց, բռնեցի նրա ձեռքը: Ես դա արեցի բնագոյաբար եւ չգիտեի, թե արդյոք իմ այդ գործողությունը տեղին էր: Սակայն նա նույնպես ամուր բռնեց իմ ձեռքը: Նա գլխարկի տակից ինձ էր նայում՝ յուրահատուկ մի հայացքով: Դա ամենաթախծոտ եւ ամենահաստատուն հայացքն էր, որ ես երբեւէ տեսել էի: Ես իսկույն եւեթ հասկացա, թե ինչու էր Ասյայի փեսան՝ Խաչալի մի մարդ, ուզում, որ մենք անպայման հանդիպենք նրան: Բանն այն է, որ Ասյան ինքն էր փափագում հանդիպել մեզ: Նա ցանկանում էր հանդիպել «այլ հայերի»:

Այսօր եղեռն վերապրածներից շատ քչերն են ողջ մնացել, իսկ ցեղասպանության հարյուրամյակի ժամանակ՝ 2015 թ., ավելի քչերը ողջ կլինեն: Հուսով եմ, որ Ասյան այդ ժամանակ մեզ հետ կլինի, քանի որ ես մտադիր եմ այդ տարում կրկին այցելել Չունքուշ գյուղ: Այդ գյուղի բնակիչներից եւ ոչ մեկը չի ոգեկոչելու 10 000 հայ նահատակի հիշատակը: Այնպես որ այդ առաքելությունը կմնա ինձ նման մարդկանց ուներին: Ես կգրվեմ Ասյային, ինչպես կգրվեի այդ վայրում ապրած բոլոր հայ նահատակներին:

*Անգլերենից թարգմանեց
Տիգրան ՄԱՆՈՒՅԱՆԸ
Բանասիրական գիտ. թեկնածու*

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1960-1980-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Սկիզբը՝ էջ 4

Մարդկանց հարազատեցնող, մեծի ու փոքրի տարիքային սահմանը չնչող սարոյանական այս շունչն է իշխում նաեւ «Իմ սիրելի փոքրիկը» (1965) թատերախաղում, որն ըստ հեղինակի՝ նախատեսված է «յոթից մինչեւ յոթանասուն տարեկան երեխաների համար»: Ստեղծված են պայմանական վիճակների մեջ գործող խորհրդանշական հերոսներ, որոնք որոնում են սիրով ու բարեկամությամբ համատեղ ապրելու ճանապարհը:


Կենսականորեն հավաստի, բայց եւ պայմանականորեն սրված վիճակների մեջ մարդկային ճակատագրերի պատկերման հաջող օրինակներ են **Պ. Չեյթունցյանի** «Ամենատխուր մարդը» (1973) եւ «Ոչ այսօր, ոչ վաղը» (1983) դրամաները, որոնց նյութը մշակել է նաեւ արձակ գրվածքներում: Երկու դրամայում էլ ներկայացված է մարդու ազատության հարցը: Մի դեպքում ստեղծագործ միտքը բանտային պայմաններում ցմահ դատապարտյալին բերում է համաշխարհային ճանա-

չում, մյուս դեպքում ոճի զիտակցումը մարդուն ազատագրում է մեղքից եւ մղում ապաշխարանքի:

1960-1980-ական թթ. ստեղծված դրամաներում առանձնահատուկ տեղ է գրավում մարդուն տարբեր վիճակների ու հարաբերությունների մեջ ներկայացնելու, նրանից կեցության ճշմարտություններ կորզելու նախասիրությունը: Պաշտոնակատարությունից ազատագրված մարդը կանգնում է իր մարդկային ու քաղաքացիական խղճի դատաստանի առջեւ եւ, ինչպես հայելու մեջ, ուշադիր նայում ինքն իր աչքերին: Այս կողմնորոշման վկայություն են **Գ. Յաղչյանի** «Կյանքի իրավունք» (1978) գրքում զետեղված «Կյանքի իրավունք», «Մի կաթիլ արեւ», «Մարդը», «Ինքնասպանություն», **Պ. Չեյթունցյանի** «Անավարտ մենախոսություն» (1981), «Վերջին խաղը» (1982), **Ս. Հարությունյանի** «Միայն մարդն է ուղիղ քայլում» (1968), «Եթե քո աչքերը պարզ են» (1974) դրամաները, ինչպես նաեւ՝ **Ա. Բաբայանի** «Հանդիպում նորից» (1976),

Վ. Շողերյանի «Դրամատիկական երկեր» (1979), **Գ. Սարգսյանի** «Գլխապտույտ» (1980) հավաքածուներում տպագրված նույն տեսակին պատկանող երկերը: Թե՛ նյութը, թե՛ հերոսների ընտրությունն ինքնին հետաքրքրական են, կարեւոր են նաեւ արժարժված հարցադրումները, բայց, որպես օրենք, միշտ չէ, որ խոր ու դրամատիկ պատճառաբանվածություն ունեն դեպքերի հոգեբանական զարգացումները:

Ահա, օրինակ, **Գ. Յաղչյանի** «Մարդը» դրաման, որի նյութը բժիշկների աշխարհն է: Մարդուն բուժելու հնացած միջոցներին գալիս են փոխարինելու նորերը: Բայց նորը, ինչպես ամենուր, այստեղ եւս դժվար է հարթում իր ճանապարհը: Նորի ճանապարհը փակում է գլխավոր բժիշկը, որին եւս բուժման նոր մեթոդը պիտի փրկեր մահից: Ի վերջո, նորը համառությամբ հարթում է իր ճանապարհը: Բայց հիմ ու նորի բախումը շատ է մերկապարանց եւ կոպիտ, հեշտ են հոգեբանական անցումները, որից եւ տուժում է շրջիկ մտահոգա-



ցումը: Հերոսները (Պոռչյան, Խալաթյան, Նարինյան) երեւում են միակողմանի բնավորությամբ եւ սահմանափակ վարքագծով: Այս թերությամբ են հատկանշվում նաեւ հեղինակի մյուս գործերը:

*Շարունակելի
Դավիթ ԳԱՍՊՐԱՅԱՆ
Բանասիրական
գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

ԹԵ ԻՆՉՊԵՍ ԿՌՎԵՃ՝ ԿՈՓՎԵՃ, ՃԱՏՐԱԿԻ ԹԱԳԸ

Հայոց ոգեղեն հաղթանակների տա-րեթվերի շարքում 1963-ն իր ուրույն, անշ-փոթելի տեղն ու դերն ունի: Ճիշտ կես դար առաջ հանճարեղ հայորդիներից մեկը՝ Տիգրան Պետրոսյանը, անվիճելի հաղթա-նակ տարավ Միխայիլ Բոտվիննիկի նկատ-մամբ ու նվաճեց աշխարհի անպարտելի մրցակալի տիտղոսը: Նա աշխարհի իննե-րորդ չեմպիոնն էր, որին վիճարկված էր ե-րեք տարի անց, Բորիս Սպասկու հետ մր-ցապայքարում, դարձյալ պահպանել բարձր կոչումն ու հաղթողի դասին:

Չկա ստույգ վիճակագրություն, բայց մենք շատ լավ գիտենք, որ 1963-70-ական թթ. Հայաստանում եւ Սփյուռքում ծնվող տղաների գերակշիռ մեծամասնությունը Տիգրան էր՝ հայոց երկու մեծ արքաների պատվին: Եթե ժամանակագրությամբ ա-ռաջին Տիգրանը ռազմի դաշտում էր իր հմուտ ու իմաստուն ռազմավարությամբ կերտել մեծ ու հզոր Հայաստան, ապա երկրորդն իր փոքրացած, բզկտված, ծվեն-ծվեն արված հայրենիքը ճանաչելի դարձ-րեց աշխարհին, հային բնութագրող ան-վան վերածեց, վերածեց իմաստուն, հա-վասարակշիռ ստրատեգի խորհրդանշի: Նրա ասպարեզն էլ մարտադաշտ էր, որ երբեմն դուրս էր գալիս 64 վանդակի սահ-մաններից ու վերածվում անվայել բան-սարկությունների, հոգեբանական դա-վադրությունների, շանտաժի, գրոշանոց ներկայացումների թատերաբեմի: Բայց նա ճշմարիտ հայ այդ էր՝ զուսպ, խոհուն, սադրանքի չտրվող փիլիսոփա...

Ռացիոնալ մոտեցում, խուսափել պարտությունից, չիմնավորված ռիսկից, տուրնիրային գրաֆիկի սկզբից մինչեւ վերջ լինել կայուն վիճակում. թերեւս այս հատկանիշներով էր պայմանավորված պետրոսյանական մարտավարությունը ցանկացած բարդության մրցապայքա-րում: Մոտեցումն այս հիմնականում ար-դարացված էր: Օրինակելի են 1978-ին Ռիո դե ժանեյրոյում միջփնջային մրցում-ների ցուցանիշները: Տիգրան Պետրոսյա-նը թվով ամենաքիչ քայլերն էր կատարել՝ 459, գրեթե չէր հետաձգել պարտիաները,



ցայտնոտային վիճակում չէր հայտնվել ու նվաճել էր երեք բաղձալի ուղեգրից մեկը: Սա կայուն, օգտակար գործողության բարձր գործակից ունեցող մարզիկի, մար-տիկի բնութագիր է:

Չիմնավորված ռիսկի հարցին վերա-դառնալով՝ հիշենք շախմատային մեկ այլ հանճարի՝ Ռոբերտ Ֆիշերի պնդումը, թե Պետրոսյանի զգուշավորությունը խան-գարեց, որ նա բացարձակ, անվիճելի աստղ լինի մարզաձեւի Օլիմպոսում: Բայց սա ասել է մի մարդ, որին խանգարե-ցին ավելորդ «համարձակությունը», մե-ծագրության հասնող ինքնավստահու-թյունը, անկանխատեսելի վարքագիծը: Նա շատ ավելին կաներ ու կթողներ ճա-տրակի պատմության մեջ, եթե հավասա-րակշիռ ու զուսպ լիներ, ինչպես Տ. Պե-տրոսյանը...

1963 եւ 66 թվականներին ողջ ժողո-վուրդը շուկեղ պահած հետեւում էր իր հանճարեղ զավակի յուրաքանչյուր «քայ-լին»: Բոլորի հայացքը զամված էր Երեւա-նի օպերայի շենքի ճակատին ամրացված ճատրակի ցուցադրական մեծ տախտա-կին: Առավել հաջողակները մրցապայքա-րին հետեւում էին «տեղում»՝ Մոսկվայի Էստրադայի թատրոնի շենքում: Այստեղ էր հայ արվեստագետների (Արամ Խաչատ-րյան, Անդրեյ Բաբաեւ, Անտո Բաբաջա-նյան, Դմիտրի Նալբանդյան), մտավորա-կանների սերուցքը, փառահեղ զորահրա-մանատարների առաջնորդությամբ՝

ԽՍՀՄ մարշալ Հովհաննես Բաղդամյան, ծովակալ Հովհաննես Իսակով, զրահա-տանկային զորքերի գլխավոր հրամանա-տար, մարշալ Համազասպ Բաբաջանյան: 1963-ի մայիսի 20-ին՝ վերջին երեք տուրից առաջ, արդեն հայտնի էր հաղթողի անու-նը:

Հնաբնակ երեւանցիները լավ են հի-շում այդ բերկրալի օրերը, այդ ցնծությու-նը... Ավելի ուշ սրան համարժեք հաղթա-նակներ մեզ պարգևեց Հայաստանի Հան-րապետության 21-րդ հարյուրամյակի շախմատային «ոսկե» թիմն ու ապացու-ցեց, որ «գերտերություն» եզրույթը սահ-մանելիս տարածքի չափերի, բնակչու-թյան թվի, օգտակար հանածոների, ՀՆԱ-ի եւ այլ ցուցանիշների վիճակագրությունն անգոր է...

Շախմատային մեր կենդարյա փայլուն պատմության դրվագները դարձյալ վեր-հիշելու (իսկ երիտասարդ սերնդի համար՝ ծանոթանալու) լավ հնարավորություն է տալիս օրենս լույս տեսած «Տիգրան Պե-տրոսյան. Շախմատային թագի համար պայքարի քրոնիկոն» ռուսերեն մենագրու-թյունը, որը լույս է ընծայել Երեւանի պե-տական ճարտարապետության եւ շինա-րարության համալսարանի հրատարակ-չությունը, կազմի ձեւավորումը՝ պրոֆե-սոր Ա. Սոխիկյանի: Գրքի հեղինակները հայտնի են իրենց նախորդ՝ համանման ե-րախայրիքներով: Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, Հայաստանի ազգա-

յին ագրարային համալսարանի դասա-խոս Ռաֆայել Զատինյանը հայ շախմա-տի պատմությանը նվիրված յոթ մենագ-րության, շախմատային օրացույցների հե-ղինակ է: Նա վերջ հիշված բուհում հիմնել է նմանը չունեցող՝ հայկական շախմատի պատմության թանգարան, որտեղ խնամ-քով պահվում է ավելի քան 1500 մասունք-ցուցանմուշ:

Մյուս համահեղինակը՝ Գագիկ Խանա-միրյանը, օդազնացության մասնագետ է, 1978-ից իր ծառայությունն է բերում հայ-կական ավիացիային: Նա շախմատի եւ ֆուտբոլի հայտնի վիճակագիրներից է՝ մենագրությունների հեղինակ: 2011-13 թթ. Մոսկվայում լույս է տեսել նրա հեղի-նակած «ԽՍՀՄ ֆուտբոլի առաջնություն-ները թվերով եւ փաստերով» տեղեկա-տուն:

Տիգրան Պետրոսյանին նվիրված այս մենագրությունն սկզբում է աշխարհահռ-չակ գրոսմայստեր Ռաֆայել Վահանյա-նի հակիրճ խոսքով, որում մասնավորա-պես ասվում է. «Աշխարհի 9-րդ չեմպիո-նի կյանքի եւ ստեղծագործական ուղու մասին գրվել են գրքեր: Տվյալ մենագ-րությունը ներկայացնում է նրա մարզա-կան կյանքի գլխավոր մասը, շախմա-տային բարձրագույն՝ աշխարհի չեմ-պիոնի կոչման համար պայքարը»: Տ. Պետրոսյանի կենսագրության սեղմ, կա-րեւոր դրվագները ներկայացնելուց հե-տո մենագրության հեղինակները, ըստ հավակնորդների մրցապայքարի եռա-մյա փուլերի, ներկայացնում են նրա մր-ցելույթները: Յուրաքանչյուր փուլի դի-տարկումից հետո բերվում են պարտիա-ների սղագրությունները, դրանցից ա-ռավել հետաքրքիրները՝ միջազգային գրոսմայստեր, ՀՀ «ոսկե» թիմի անդամ Վլադիմիր Հակոբյանի վերլուծություն-ներով: Սա շատ կարեւոր ու անփոխա-րինելի կարող է լինել շախմատով հրա-պուրված պատանիների համար, այն պարզապես քրեստոմատիայի դեր կա-րող է կատարել:

Կես դար առաջ սկսված շախմատային վերելքի ավանդույթները շարունակվում են նոր թափով, նոր նվաճումներով, եւ բա-նաստեղծի հայտնի խոսքերը վկայակոչե-լով՝ կարող ենք պնդել. «Մեզ ելնելու սա-րեր կան դեռ, դարեր կան դեռ...»:

ԱՍԻ ԽՈՐԱՎԵՐԴՅԱՆ

ԱԹ-ԹԱՆԱՀԻ

Սկիզբը՝ թիվ 9-12,
14-15, 17, 19-20, 23

Քեզ լսելով եւ կարդալով նա-մակը՝ նա կփափկի, կհաշտվի քեզ հետ եւ դիմադարձ կանի ալ-Յուսայն Իբն Ամրիին: Եթե նա հարցնի՝ քեզ որտեղից այս նա-մակը, ասա նրան, որ դա քո հոր թղթերի մեջ էր. նա պահել էր, որ-պեսզի դու դա օգտագործես ալ-Յուսայնի դեմ, եւ որ նա է քեզ հայտնել, որ ալ-Մուլթադիդը մին-չեւ իր կյանքի վերջը վախճում էր այդ մարդուց: Իսկ դու բոլորո-վին մոռացել էիր այդ նամակը եւ այժմ հիշեցիր: Հետո ձեռնամուխ եղիր ալ-Յուսայն Իբն Ամրիից ու Իբրահիմ աշ-Շիրազիից եւ նրանց մանկավիճիկներից ստա-նալ այնքան հազար, որքան հնարավոր է, եւ խալիֆը կհամա-ձայնի: Եվ նրա թույլատրու-թյունն ստանալով՝ նրան ներշն-չիր, որ այդ գործը հայտնի է դար-ձել, եղել քննարկման առարկա եւ զանազան լուրերի աղբյուր, եւ որ եթե նա հապաղի բոլոր այդ մարդկանց քո ձեռքը հանձնելիս՝ պաշտոնյաներն այլեւս չեն կա-րող կատարել իրենց պարտա-կանությունները, քանի որ ամեն

մեկը կուզենա իր շահերն ապա-հովել, իսկ դա կլինի ի վնաս խա-լիֆի: Հետագայում վեզիրու-թյունն ամեն տեսակ խռընդոտի կհնդիպի, եւ այս պաշտոնը կար-ժանանա համընդհանուր արհա-մարհանքի: Դրանից հետո խա-լիֆն անպայման այդ մարդկանց կհանձնի քո իշխանությանը:

Ալ-Զասիմին իսկույն գնաց ալ-Մուկթաֆիի մոտ եւ ամեն ինչ արեց այնպես, ինչպես սովորեց-րել էր Աբու-լ-Աբբասը, եւ ամեն ինչ ստացվեց այնպես, ինչպես կանխատեսել էր նա: Եվ ալ-Զա-սիմը խալիֆի մոտից գնաց՝ ալ-Յուսայն Իբն Ամրիին ու նրա մեր-ձավորներին ձերբակալելու թույ-լատրությամբ:

Նա ձերբակալեց նրանց, խլեց նրանց ունեցվածքը եւ համոզվե-լով, որ այլեւս նրանց բան չի մնացել, ալ-Յուսայն Իբն Ամրին ու Իբրահիմ աշ-Շիրազիին ու-ղարկեց ալ-Ախվազ՝ ոչնչացնե-լու: Նա նշանակեց մարդկանց, ո-րոնք նրանց անմիջապես սպա-նեցին, հենց որ հասան ալ-Ախ-վազ: Իսկ ասում են, որ նրանց մի տան մեջ փակել են եւ ուտեստ ու ջուր չեն տվել: Մի անգամ հա-մոզվելով, որ նրանք սպանված

են՝ ալ-Զասիմը կարգադրեց այն տան դուռը բանալ եւ նրանց դիե-րը տեղափոխել այլ տուն, որ կա-րելի լիներ ասել՝ նրանք բնական մահով են մահացել:

Պատմողը շարունակեց.

«Հաղթելով եւ իր ծրագիրն ի-րականացնելով՝ ալ-Զասիմը համբուրեց Աբու-լ-Աբբաս Իբն ալ-Ֆուրաթի գլուխը, աչքերը եւ այսպես շնորհակալություն հայտնեց. «Դու իմ հայրն ես, իմ աջ ձեռքը եւ այլն»: Դա շարժեց Իբն Ֆիրասի խանդը, եւ նա վե-զիրին գլխի գցեց՝ հարցնել Աբու-լ-Աբբասին, թե նա որտեղից է վերցրել այն նամակը: Նա հենց այդպես արեց եւ Աբու-լ-Աբբասից ստացավ այսպիսի պատաս-խան. «Որոշ ժամանակ առաջ փողոցով անցնելիս նկատեցի, որ հրուշակագործի կրպակի դարա-կից կախված էին թղթեր՝ քաղց-րավենիք փաթաթելու համար: Իսկ ես որեւէ գրած բան տեսնե-լիս՝ միշտ եւ ամեն ինչ կարդում եմ եւ հաճախ դրա համար վար-ձատրվել եմ: Նայեցի թղթերը եւ նկատեցի նամակի հասցեն եւ ճանաչելով ալ-Յուսայն Իբն Ամ-րի ձեռագիրը՝ այդ նամակը կար-դալու ցանկություն զգացի: Ծա-



ռայիս ուղարկեցի կրպակից քաղցրավենիք զնելու եւ խնդրե-լու՝ փաթաթել այդ թղթով: Նա այդպես արեց եւ ինձ բերեց նա-մակը: Կարդալով իմացա՝ որքան զագրելի էր դրա բովանդակու-թյունը:

Ինքս ինձ ասացի. «Դա երկրի վրա ապրողներից վատթարա-գույնն է, եթե նա կարող է մեկի գրագիրը լինելով՝ նրա թիկուն-քից գրել այդ ոգով: Գուցե կգա օ-րը, երբ ինձ սպառնան այդ մար-դու խարդավանքները, այն ժա-

մանակ եւ կկարողանամ պաշտ-պանվել դրանցից այս նամակի օգնությամբ կամ կիրապարակեմ դրա բովանդակությունը եւ այդ-պիսով կբացահայտեմ այդ մար-դու չար բնույթը»: Ուստի մաքրե-ցի քաղցրավենիքի հետքերը եւ նամակը պահեցի երկար տարի-ներ: Իսկ այժմ, երբ վեզիրն ինձ պատմեց այն պատմությունը, ես մտածեցի, որ հասել է նամակը մշտեղ բերելու ժամանակը, ինչ եւ արեցի»:

Շարունակությունը՝ էջ 8

Ն. ԲԵՐԴՅԱՆԵՎ

Սկիզբը՝ թիվ 21-23

Այս ժողովածուի հեղինակներն ամենից շատ խաղում են կրոնափիլիսոփայական որոնումների շինծու լինելու կասկածների վրա: Չերքելու այդ հեշտ միջոցը լայնորեն օգտագործում են ոչ միայն մարքսիստները, այլև ուրիշ այլ քննադատներ. սա շատ մոդայիկ միջոց է: Սակայն անազնիվ լինելու մեղադրանքն ունի մի թերություն՝ այն, որ դա նույն հաջողությամբ կարող է հասցեագրվել հենց մեղադրողներին: Ես չեմ ճանաչում պարոն Յուզկեֆչի, չգիտեմ, թե ինչ է անում նա կյանքում, համապատասխանաբար նա էլ ինձ չի ճանաչում եւ իր քննադատության մյուս օբյեկտներին: Պարոն Յուզկեֆչիի հողվածները, բնականաբար, չեն վկայում խոսքի ու գործի համապատասխանության մասին, գրականությունը եւս ինքնըստինքյան չի կարող վկայել այդ մասին. դատողություններ անելու համար հարկավոր են այլ աղբյուրներ: Իսկ պարոն Յուզկեֆչիի գրվածքները նույնպիսի մի գրականություն է, ինչպիսին մեր՝ բոլոր մեղավորներինս. հավանաբար միայն գրական գրականությունը բավարար չէ: «Գրականություն» բառը ես որպես հիշոց չեմ օգտագործում, նույնիսկ ավելին՝ կցանկանայի բողոքել գրականությունն անվանարկելու եւ անարգելու դեմ, կցանկանայի հնա-

րավորինս բարձրաձայնել, որ իմաստն ու գրողակա-նությունը դա գործ է, որ գրականությունը մեծ նշանակություն ու իմաստ ու-նի, որ գրողը պետք է ավելի շատ հարգանք տածի իր նկատմամբ: Անկեղծու-թյան վերաբերյալ պետք է ասել պարոն Յուզկեֆչին, որ բոլոր ժամանակներում եւ բոլոր մարդիկ անկեղծության տակ հասկացել են խոսքի ու ապրումի, գրականության ու կենսա-փորձի միջեւ համապա-տասխանություն, այ-սինքն՝ թե ինչ է խոսում մարդը, եւ թե ինչ է կա-տարվում նրա ներսում: Այդ չափանիշով՝ Նիցշեն չափազանց անկեղծ գրող էր, թեպետ արտաքին գործողություններն ու ա-րարքներ համարյա նա չունի: Այդ իսկ պատճառով անկեղծ էր նաեւ Լեւ Տոլստոյը, չնայած նրա խոսքերը խիստ տարբերվում են գործերից: Չափազանց անկեղծ շատ գրողներ, որոնք բոլորի կողմից են անկեղծ համարվում, ոչ միայն արտաքին գործեր չունեն, այլև շատ-շատերը նրանցից չունեն ակտիվ, կամային խառնվածք, եւ ոչ էլ նրանց գործերում ակտիվու-թյան մեջ է կատարված իմաստ-ը: Բոլորին է հայտնի այն ծեծ-ված ճշմարտությունը, որ պետք է համաձայնեցում լինի խոսքի ու



գործի միջեւ, բայց այդ ճշմար-տությամբ ոչ մի կերպ չես մոտե-նա մի այնպիսի առարկայի, ինչ-պիսին ճշմարտության փնտր-ուղեն է: Որպեսզի գրական գործում տեսնես մարդկային հոգու վավերագիրը, հարկավոր է այն-պիսի նրբություն, ինչպիսին կա-րեցանքի փորձառությունն է, ինչ-որ բան տեսնելու ցանկու-թյունը, որոնց մասին պարոն Յուզկեֆչի՝ իր դասակարգային մանիայով, մտորել անգամ չի կարող: Ես չափից ավելի լավ գի-տեմ, թե որքան քիչ ակտիվու-թյուն կա մեր կրոնական շար-

ժումներում, որքան քիչ են գործերը, եւ գիտեմ, թե ինչ-պես են տառապում դրանից ազնիվ մարդիկ: Սակայն այդ շարժումը գտնվում է ամե-նասկզբնական փուլում, դա նույնիսկ շարժում չէ, այլ սոսկ դեպի նրան գնալը: Իսկ բուն որոնումն այստեղ ներկայաց-ված է մեծ ակտիվությամբ. դա արդեն գործ է: Առայժմ սա միայն գիտակցության ճգնա-ժամ է՝ կապված սրտացավու-թյան եւ կամքի անբավարա-րության հետ: Մենք ապրում ենք անցումային ժամանա-կաշրջանում, եւ հոգու անցու-մային վիճակի զոհեր ենք: Այ-սօր ոչ այնքան արտաքին գործերի ժամանակն է, որքան ժամանակը ներքին աշխա-տանքի, նոր գիտակցության պատրաստման, հին կուռքե-րից մաքրվելու: Երբ սկսվեց մարքսիզմը, այն եւս մի խումբ մարդկանց սեփականությունն էր, գրականություն էր, որը հե-տագայում, երբ մարքսիստական գիտակցությունը լայն զանգված-ներին իշխեց, նոր դարձավ գործ ու կյանք: Մեր կրոնական շար-ժումը դեռեւս դուրս չի եկել խմ-բակային վիճակից, գրականու-թյունից, այն իրագործվում է ան-հատների մեջ եւ ոչ թե՛ զանգ-վածների (ես խոսում եմ, հիարկե, ոչ թե՛ քրիստոնեության մասին՝ նրա համաշխարհային-պատմա-կան նշանակությամբ, այլ՝ մեր

նոր որոնումների): Այսպես է սկս-վում ուզածը որոնում: Բայց մենք բոլորս գիտակցում ենք, որ այն-ժամ կլինի իսկական, կենսական, պատկառելի կրոնական շար-ժում, երբ այն կդառնա ժողովրդական եւ դուրս կգա կրոնական ապրումների գրական արտա-հայտության եւ առանձին ան-հատների ու խմբերի որոնումնե-րի փուլից: Այստեղ կրոնական-փիլիսոփայական գրականությու-նը կխաղա իր ենթարկող եւ պատրաստող դերը: Առանձին անհատներ, առանձին մտածող-ներ ավելի շուտ ու շատ զգացին ու համոտեցեցին զանգվածներին անհրաժեշտ նոր գիտակցությու-նը: Իսկ այն, թե ինչ են ենթադրում ախոյանները՝ ոչ անկեղծություն ասելով, ապա դա միշտ էլ եղել է. ախոյաններն ու մարքսիստները կասկածում են անկեղծությանը. ինչ արած՝ այդպիսին է մեղավոր մարդը: Այն, որ մենք գնում ենք դեպի կրոնի՝ ժողովրդական հե-ղափոխությանը, զանգվածների կյանքի կրոնական վերափոխու-մին, ապա դա կարող է միայն հա-վատի ու հույսի առարկա լինել, այստեղ չի կարող լինել ճշգրիտ գիտություն ու գիտական կան-խազգացում: Սակայն հաստատ գիտեմ, որ մեր ժողովուրդը, նաեւ բոլոր ժողովուրդները՝ ի-րենց զանգվածներով, երբեք չեն ապրել եւ չեն կարող ապրել այլ կերպ, քան կրոնական:

Շարունակությունը՝ էջ 8

ՄԱՐԿԵԼԻՆԻ ՕԼԵՍԵՒՅԿԻ

Սկիզբը՝ էջ 3

Աշխատանքն ապրուստի եւ նյութական բարեկեցության մի-ջոց է, բայց թեսաղոնիկեցիների պարագայում այդպես չէ: Պողոս առաքյալը նշում է, որ աշխա-տանքի փոխարեն նրանց մոտ զարգանում էին դատարկաբա-նությունը եւ ծուլությունը (Բ Թես. Գ 6-12): Իսկ խնայողության օրի-նակ ցույց տվեց հենց Յիսուս Քրիստոսը, երբ ժողովրդին կե-րակրելուց հետո աշակերտներին պատվիրեց. «Յավաքեցե՛ք այդ մնացած կտորները, որպեսզի ոչ մի բան չկորչի» (Յուկ. Զ 12): Յա-վելյալ եկամուտ ստանալու հա-մար օրինական ճանապարհով գումար տրամադրելը եւ սեփա-կան ունեցվածքը բազմապատ-կելու համար օգտագործելը, ան-շուշտ, թույլատրելի են: Տաղան-դի մասին առակով ցույց է տը-ված վերջինիս թույլատրելիու-թյունը: Սակայն ցանկացած վաշ-խառություն, անխոս, հակաբա-րոյական է, ինչի մասին վկայում է Սուրբ Գրքը: Անարդար ճանա-պարհով ձեռք բերված ունեց-վածքը վերադարձնելը պարզ կերպով արտահայտվում է Չակ-քետսի օրինակով: Եթե մեծահա-րուստները պետք է ունենան ներ-քին անկախություն ունեցված-քից, ապա ընչազուրկները պետք է ունենան ներքին անկախու-թյուն աղքատությունից: Պետք է գոհ լինել՝ հագուստ եւ կեղանկուր ունենալով. «Ոչինչ չբերեցինք աշխարհ, ոչ էլ պիտի կարողա-նքք տանել: Այլ ունեք կերա-կուր եւ հանդերձներ ու դրանով էլ բավականանք» (Ա Տիմ. Զ 7-8): Աղքատները պետք է գիտակցեն նաեւ, որ նյութական կարիքի ժա-մանակ կարող են հասնել հոգե-ւոր հարստության եւ լինել հոգե-պես առավել կատարյալ: Պողոս առաքյալն ասում է. «Իբրեւ թե

տանակներ, բայց եւ շատերին ենք հարստացնում, իբրեւ թե ո-չինչ չունենք, բայց ունենք ամեն ինչ» (Բ Կորնթ. Զ 10): Իսկ Յակո-բոս առաքյալն այսպես է գրում. «Աղքատ եղբայրը թող պարծե-նա, երբ Աստված բարձրացնում է իրեն, իսկ հարուստը թող պար-ծենա, երբ Աստված խոնարհեց-նում է իրեն» (Յակ. Ա 9-10): Աղ-քատությունն ունի իր վտանգ-ներն ու գայթակղությունները. այն ստի, թալանի, նախանձի, փոքրոգություն, սեփական ճա-կատագրից եւ Աստծուց դժգոհե-լու առիթ է ստեղծում: Չքավոր-ները պետք է հիշեն այս փորձու-թյունների մասին եւ զգուշանան գայթակղություններից: Սակայն աղքատությունը մարդուն ազա-տում է հարստության գայթակ-ղությունից. «Իսկ ովքեր հարս-տանալ են ուզում, ընկնում են փորձության, որոգայթի եւ բա-զում անմիտ ու վնասակար ցան-կությունների մեջ, որոնք ընկղ-մում-տանում են մարդկանց դե-պի կործանում եւ դեպի կո-րուստ» (Ա Տիմ. Զ 9):

Կանոններ, որոնք թելադրում են քրիստոնյաներին՝ ինչպես վե-րաբերվել հարստությանը կամ ընչազուրկությանը, ուղեցույց են նաեւ կյանքի հաճույքների, բա-րիքների, դժբախտությունների, տանջանքների եւ հիվանդու-թյունների ժամանակ: Այսինքն՝ ցանկացած իրավիճակում պետք է պահպանել բարոյական ազա-տությունը, ներքին անկախու-թյունը. հարկավոր է լինել երջան-կության կամ դժբախտության տերեր, այլ ոչ թե՛ ծառաներ: Ա-մեն մի դժբախտություն կամ հի-վանդություն Աստծո համար դաստիարակչական միջոց են, ա-ռանց որոնց մարդկության բարո-յական նկարագիրն առավել կվառթարանար: Երբ քրիստո-

նյային դժբախտություն է պա-տահում, Աստծու խրատի համա-ձայն. «Ո՛չ դրա մեղքն է եւ ո՛չ էլ իր հոր ու մոր, այլ՝ որպեսզի դրա վրա Աստծու գործերը հայտնի լի-նեն» (Յուկ. Թ 3). մարդը ոչ թե պետք է հարցնի՝ ինչո՞ւ է այդ դժ-բախտությամբ պատժվում, այլ օգուտի ստեղծված իրավիճակից՝ կատարելով Աստծո կամքը: Իսկ Աստծո կամքը այս է՝ մաքրել դժ-բախտության եւ տանջանքների մեջ ընկած մարդուն եւ ուղղորդել նրան ծառայելու Աստծուն եռան-դուն կերպով՝ նպաստելով սեփա-կան հոգու փրկությանը: Պետրոս առաքյալն ասում է. «Ուրախա-նում եք դրանով դուք, որ այժմ դեպքերի բերումով, այլ եւ այլ փորձությունների փոքր-ինչ տը-րւած եք, որպեսզի ձեր հավատի փորձը, որ առավել արժեքավոր է, քան կորստյան ենթակա ոսկին, որ կրակով է փորձված, դառնա գովքի, փառքի ու պատվի առա-րկա հայտնության ժամանակ Յի-սուս Քրիստոսի» (Ա Պետ. Ա 6-7): Իսկ Պողոս առաքյալն ամփոփում է. «Յոգիների Յայրը մեր օգուտի համար է խրատում, որպեսզի հաղորդակից լինենք Նրա սրբու-թյանը» (Եբր. ԺԲ 10):

Դժբախտություններն ու տան-ջանքները դրդում են մեզ մտահա-յելու եւ ճանաչելու մեր թերու-թյուններն ու մոլությունները: Ար-դյունքում բացահայտվում է երկ-րայինի անցողիկ եւ ունայն լինե-լը՝ առաջացնելով ձգտում դեպի մնայուն եւ հավիտենական բա-րիքներ, սովորեցնում է աղոթել եւ ապավինել Աստծուն, մեր մեջ դաստիարակում համբերություն եւ ինքնազոհություն՝ ուրիշի թե-րությունների եւ դժբախտություն-ների հանդեպ դարձնելով ներո-ղամիտ ու կարեկից: Չարչա-րանքները մարդու մեջ արթնաց-նում են անզորության եւ հնա-

զանդության զգացումներ: Այս-պես է իր մասին գրում Պողոս ա-ռաքյալը. «Որպեսզի այդ հայտ-նությունների առատությամբ չհ-պարտանամ, ինձ տրվեց մարմնի խայթ, սատանայի մի պատգա-մավոր, որ բռնցքահարի ինձ, որ-պեսզի չզոռոգամ տանամ» (Բ Կորնթ. ԺԲ 7): Անգամ Յիսուս Քրիստոսի մասին է ասվում. «Թե-պետեւ Որդի էր, բայց Իր չարչա-րանքների միջոցով հնազանդու-թյուն սովորեցրեց» (Եբր. Ե 8): Ի-րավամբ, տանջանքներն ու հի-

դարար պատուհն է հատուցում նրանով դաստիարակվածներին» (Եբր. ԺԲ 11), որ «ում սիրում է Աստված, նրան հանդիմանում եւ խրատում է» (Յայտ. Գ 19), որ Իս-քը՝ «Քրիստոս պետք է չարչա-րանքներ կրեր եւ այնպես մոներ Իր փառքի մեջ» (Ղուկ. ԻԴ 26): Արդ, «խոնարհվեցե՛ք Աստծու հզոր ձեռքի տակ, որպեսզի ժա-մանակին նա ձեզ բարձրացնի: Ձեր բոլոր հոգսերը Նրա վրա գցե-ցե՛ք, որովհետեւ Նա է, որ հոգում է ձեր մասին» (Ա Պետ. Ե 6-7): Բնա-



վանդությունները կարող են հա-կառակ ազդեցությունն ունենալ. դրանք կարող են մարդուն դարձ-նել ջղագրգիռ, բարկացկուտ, դժ-գոհ եւ տրտնջող, անհամբեր եւ ե-սասեր: Այս բոլոր վտանգները պետք է ի մտի ունենա տանջվող եւ հիվանդ մարդը, որպեսզի պաշտպանվի եւ զերծ մնա դրան-ցից: Տանջվողը նախ պետք է ու-ժեղ կամք ունենա եւ կառավարի սեփական անձը, ապա պետք է գորանա այն մտքով, որ «ամեն խրատ տվյալ պահին ուրախու-թյուն չի թվում, այլ՝ տրտմություն, բայց հետո արդարության խաղա-

կան է, որ քրիստոնյան հիվանդու-թյան եւ տանջանքի մեջ դիմում է Եկեղեցու կամ հոգեւորականի օգ-նությանը՝ խոստովանելով, ա-պաշխարհելով եւ հաղորդվելով: Եթե նա առողջ եւ երջանիկ օրե-րին իր մեջ չի ամրացրել համբե-րությունն ու արիությունը, ապա դժվար թե կարողանա դրանք ձեռք բերել հիվանդության եւ վշ-տի ժամանակ: Այդ պատճառով պետք է նախապես հոգին պատ-րաստել փորձություններին:

Շարունակելի
Ուսերենից թարգմանեց
Օլգա ՅՈՎՅԱՆՆԻՍՅԱՆԸ

Ն. ԲԵՐԴՅԱՆԿ

Սկիզբը՝ էջ 7

Հաստատ գիտենք նաեւ, որ ոչ մի մատերիալիզմ չի կարող բավարարել ժողովրդի կյանքի բարձրագույն հիմքերի, բարձրագույն հիմնավորումների պահանջները: Դասակարգերի հետաքրքրությունների քարոզչությունը, որով դեպի ժողովրդը գնացին սոցիալ-դեմոկրատները, ինչպես եւ այլ հեղափոխականներ, որոնք կանգնած էին մատերիալիստական հենքի վրա, ժողովրդի կրոնական քննադատների կողմից չընդունվեց, այն ծնեց միայն վայրի զեխություն եւ վերջ ի վերջո հանգեցրեց հակազդեցության, ազատագրական գաղափարի հանդեպ հիասթափության: Ժողովրդական զանգվածները չեն կարող ապրել այն բարդ դրաման, որ ապրում են առանձին անհատներ, մշակույթի վերնախավը, ինչն արտահայտվում է գրականության մեջ: Ժողովուրդը՝ իր զանգվածներով, անցնում է կրոնականության հին ձեւից դեպի նոր, ավելի լիարժեք, ավելի գիտակցական ձեւին՝ առանց ապրելու շատ փորձություններ, շատ կասկածներ, շատ բեկվածություններ, որոնք ապրել են առանձին որոնողներ: Ժողովուրդը կստեղծի նոր կրոնական կյանք (թյուրիմացություններից խուսափելու համար հարկավոր է նկատել, որ կրոնական կյանքի ակունքները պետք է փնտրել ոչ թե «ժողովրդի» մեջ, ոչ թե «մտավորականության» մեջ, այլ Աստծո, աստվածային հայտնության մեջ), եւ այդժամ տեղի կունենա պատմության դատաստանը՝ անցումային ժամանակաշրջանի մեր կրո-

նափիլիսոփայական որոնումների վրա: Դատաստանից եւս «գրական» որոնումները չեն սարսափում: Միայն կցանկանայինք, որ բոլորի կողմից հասկանալի ու զգացական լինեի այն, որ կրոնական մտքերի այն հոսանքները, որոնք սերտորեն կապված են քրիստոնեության հետ, գրականության միջոցով չեն ստեղծում ոչ մի սեփական, նոր՝ գրասենյակային կրոն, այլ դրանք ամուր կանգնած են ժողովրդական, համաշխարհային-պատմական կրոնի հենքի վրա, որից էլ բխում են դեպի ապագա է գնում մարգարեորեն կանխագուշակված կրոնը:

Լավ է, որ «Գրական անկումի» հեղինակներն ընդունում են, որ ռուս մտավորականության առջեւ դրված են նոր թեմաներ, եւ որ դրանց լուրջ ճգնաժամն ավարտվում է: Ռուս մտավորականության ողջ ավանդական աշխարհայացքը եւ ավանդական հոգեբանությունը փլուզում են ապրում: Մեր հեղափոխական մտավորականությունը սնանկացել է ոչ միայն արտաքին ապստամբության, այլեւ ներսից ու հոգեպես: Ելակետային գաղափարները, մեր հեղափոխական շարժման հիմնադրույթները ենթարկվել են կասկածի. չդիմացան կյանքի փորձությանը: Հարկավոր են նոր գաղափարներ, նոր հավատ եւ հոգեկան նոր կերտվածք: Հին միջոցներով ոչնչի արդեն չես հասնի: Մեզանում հարկ է, որ ծնվի մի նոր մտավորականություն, որը հնից պետք է վերցնի միայն ճշմարտության ծարավը, բայց նոր գիտակցության եւ հոգու այլ կերտ-

վածքի հենքի վրա: Այդ ճգնաժամը մարքսիստական հին սովորությունների ապրումներով կասեցնել չի կարելի: Բարձր մատերիալիզմով ոչ ոքի արդեն չես գերի, ոչ ոքի չես փրկի ամբողջական փլուզումից, քանի որ այդ փլուզումը պատրաստվել է հենց մատերիալիստական մարքսիզմի կողմից: Իզուր են մարքսիստներն արիանում, իզուր են արհեստականորեն իրենց ոգեւորում ու քաջալերում: Ոչ ոք նրանց չի հավատա: Այդքան բան ապրելուց հետո ամոթ է խղճուկ խոսքերով ելույթ ունենալ պրոլետարիատի հզորության, դասակարգային հոգեբանության, ապագա հասարակության եւ նմանատիպ այլ բաների մասին: Մարքսիզմը փորձեց ռուսական կյանք բերել իր խոսքն ու գործը, եւ քանի որ պարզ դարձավ, որ արդյունքում այն խիստ անհաջող, ցավալի էր, այնքան կործանարար՝ ռուսական ազատության գործի համար, որ մարքսիզմը, որպես մի ու արյուն, անհետացավ ռուսական կյանքից եւ այժմ կրկին ուզում է հարություն առնել՝ որպես խոսք, փոխակերպվում է անցած-գնացած խոսքի, եւ մարքսիզմի այդ փլուզումը հակազդեցության ժամանակավոր ծնունդ է. դրա պատճառներն առավել խոր են ու ներքին: Զե՛ որ մարքսիստական եկեղեցու ուսմունքի համաձայն՝ դժոխքի դարպասները չեն տանջում պրոլետարիատին: Պրոլետարիատը, ինչպես խոսքը, դեռեւս տիրում է մտավորականության մտքին



ու սրտին, սակայն ինչպես մարմին, այն ընկճված է, եւ նրա հզորությունը կենդանի է սոսկ մարքսիստական խոսքերով: Ինչո՞ւ ամեն բան այդպես ստացվեց: Խելոքները, ազնիվները եւ քաջերը պետք է որ գիտակցեին իրենց սխալները եւ մտորեին իրենց գիտակցությունը մաքրելու մասին: Կրոնական շարժումները դեռեւս չեն դարձել մարմին, այն ապագայում է, հույսերում, եւ դրան կհանգի ազատության ձգտող մտավորականությունը:

Թարգմանությունը՝
Ա. ՄՍՍՍԲՈՒՅԱՆԻ

ԱԹԹԱՆԱՀԻ

Սկիզբը՝ էջ 6

Երբ Իբն ալ-Ֆուրաթը սենյակից դուրս ելավ, Իբն Ֆիրասը, որ միշտ ձգտել է ալ-Զասիմի աչքում սեւացնել նրան, բայց վերջինս ուշք չի դարձրել, ասաց. «Այժմ քեզ համար պարզ է՝ որքան վնասակար է այդ մարդը: Նա ավելի վտանգավոր է քեզ համար, քան ալ-Հուսայն Իբն Ամրը: Սա թաքնված թշնամի է, որ ծածկվել է քո հագուստի ծալքերում, իսկ ալ-Հուսայնը բացահայտ թշնամի էր, որից կարելի էր զգուշանալ: Դու ինչպես կարող ես համոզված լինել, որ հենց այն ժամանակ, երբ վստահում ես նրան, նա քո դեմ չի պահի որեւէ բան այդ նամակից ավելի մաքուր կամ ձեռք չի բերել քո գրած ինչ-որ բան՝ վաղուց մոռացված, ուր կան քեզ արատավորող որոշ խոսքեր, ինչպես նա արել է ալ-Հուսայն Իբն Ամրի նամակի պարագայում:

Դու կարող ես վստահ լինել, որ նա այդ կարգի մի բան չունի՝ քո կամ հորը ձեռքով գրված: Զե՛

որ մարդիկ հաճախ զայրանում են իրենց ընկերների վրա եւ չեն վստահում նրանց, որ բարի խորհուրդ են տվել իրենց: Իբն ալ-Ֆուրաթը միայն սպասում է որեւէ հարցում նրա հետ քո անհամաձայնության ինչ-որ նշանների, որպեսզի խալիֆին հայտնի քո կամ քո հոր մասին որեւէ բան՝ դրանից վատ, եւ դրանով կործանի քեզ: Իսկ եթե կփորձես հեռու մնալ նրանից, ապա չէ՛ որ դու նրա հովանու տակ ես, եւ նա պետությունը կդիտի որպես իր տիրույթ, որի շահույթը պատկանում է միայն իրեն: Իսկ քեզ կթողնի այդ բոլորի պատասխանատվությունը: Եվ եթե չդաշնակես նրան, նա քեզ հետ հաշիվը կմաքրի այնպես, ինչպես ալ-Հուսայն Իբն Ամրի հետ վարվեց: Ավելի լավ է լսիր իմ խորհուրդը եւ նրանից ազատվիր որքան կարելի է շուտ. թունավորիր նրան եւ վերջ»:

Այս խոսքերն ընկան ալ-Զասիմի սիրտը, իսկ Իբն Ֆիրասը շարունակում էր գրգռել, մինչեւ

որ նա ի վերջո Իբն ալ-Ֆուրաթին հոտ քաշել տվեց թունավորած խնձորից, որից նա իսկույն մահացավ: Այդպես այն նամակը ավելի շատ դժբախտություն բերեց, քան որեւէ այլ նամակ աշխարհում:

Ահա թե ինձ ինչ պատմեց Աբու-լ-Հասան իր հոր խոսքերից. «Երբ Ուբայդալլահը գնաց Ջիբալ եւ իր տեղը թողեց իր որդի ալ-Զասիմին, սա Իբն Աբի Աուֆի հետ չվարվեց այնպես, ինչպես իր հայրը: Իբն Աբի Աուֆը սրտնեղում էր, բայց չէր վճռում ալ-Զասիմի հորը նամակ հղել՝ բողոքելով նրա վարքից, վախենում էր՝ հանկարծ դա չընկնի վերջինի ձեռքը: Այն ժամանակ նա սկսեց այցելել ինձ՝ սկզբում բան չխնդրելով, մինչեւ որ բարեկամացանք: Հետո նա ինձ դիմեց՝ խնդրելով վճարի ինձ ուղղված իր նամակը դնել Ուբայդալլահին ծառայող իմ բարեկամներից մեկին՝ իր ընտանիքից ուղարկվող նամակների տրցակի մեջ: Ես այդպես արեցի, եւ բարեկամս գաղտնի փոխանցում էր իմ նամակները վճարիին եւ բերում պատասխանները, իսկ ալ-Զասիմն այդ ընթացքում Ուբայդալլահից ստանում էր ահարկու նամակներ, որոնց մեջ խոսվում էր Իբն Աբի Աուֆի մասին:

Այնժամ ալ-Զասիմն իր մարդկանց կարգադրեց ճանապարհին խլել նամակները եւ այդպիսով իմացավ դրանց բովանդակությունը: Ոչ մի նամակ չգտնելով Իբն Աբի Աուֆից՝ նա խիստ զայրացավ, բայց այդպես էլ չկարողացավ պարզել՝ ինչպես են կարողացել շրջանցել իրեն, մինչեւ որ վերադարձավ Ուբայդալլահին ինքը:

Հենց այդ ժամանակ սահմանամերձ հողերի բնակիչներից մեկը դիմեց ինձ՝ խնդրելով իրեն օժանդակել՝ ստանալու Իբն Աբի Աուֆի օգնությունը Բյուզանդիայում գտնվող իր ինչ-որ գերի ազգականի գործով: Սկզբում ես հրաժարվեցի՝ գիտենալով, որ նա ընդամենը վաճառական է, բայց երբ նա պնդեց, ես նամակ գրեցի Իբն Աբի Աուֆին: Այդ մարդը շուտով եկավ ինձ շնորհակալություն հայտնեց եւ պատմեց, որ Իբն Աբի Աուֆը նրան քառասուն դինար է տվել: Տարիներ անց Իբն Աբի Աուֆն ինձ խնդրեց իրեն վարձով տալ ալ-Ամբարի իմ կալվածից այնպիսի հողակտոր, որ ջրով է ծածկվում մակընթացության ժամանակ: Նա ուզում էր այնտեղ դրոմ աճեցնել, որոնք հետո կոչվեցին «աբդալլափի»՝ Աբդալլահի Իբն Աբի Աուֆի անունով: Ես նրան վարձու տվի այդ հողը լավ վճարով, եւ նա այնտեղ դրոմ ցանեց, եւ լավ բերք եղավ: Երբ ես նրանից պահանջեցի վարձավճարը, նա դրանից հանեց քառասուն դինար, որով հետեւ այդքան սահմանամերձ էր տվել այն մարդուն, որի համար ես միջնորդել էի»:

Իսկ նրա վարքը, ինչպես ինձ ասաց դատավոր Աբու-լ-Այյաշը, կապված էր իր դատեր հետ: Նա պնդում էր, թե իբր Բաղդադում հայտնի է դարձել, թե ինչպես մի անգամ գալով տուն՝ Իբն Աբու Աուֆն իր դատերը գտել է տղամարդու ընկերակցությամբ, որ նրան ազգական չէր: Նա բռնում է այդ մարդուն եւ որոշում է գանահարել: Բայց նրան խորհուրդ չեն տալիս անել այդ բանը, որով հետեւ դրանով եւ ինքը կխայտառակվեր, եւ դուստրը: «Թող դրան, - ասում էին մարդիկ, - իսկ

առջկան հարկավոր է ձեռնաշղթայով կապել ու հսկել»:

Եթե այսօր մեք գործեցի, ապա նա եւս մեղավոր է, իսկ թե անմեղ է նա, ուրեմն ես եւս մեք չունեն: Լսեցեք, մարդի՛կ, կարելի՞ պատմել երկուսից մեկին, իսկ երկրորդին ձեռք չտալ: Այստեղ բերեք իմ հանցակցուհուն կամ բաց թողեք ինձ:

Այդ պատճառով Իբն Աբի Աուֆը պատվազրկվեց ու խայտառակվեց, դարձավ թիրախ բանաստեղծների, պատմողների եւ ընդհանրապես ամբողջ ժողովրդի համար, այդպես կատարվեց նրա անկումը:

Ռուսերենից թարգմ. Արշակ ՄԱՊՈՅԱՆԸ



ԵՐԻՍՏՈՆՅԱ ՋԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

Հիմնադիր՝

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝

«Զրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝

Աստղիկ Ստամբուլյան

Գրանցման վկայական՝ 624

Խմբագրության հասցեն՝

Մայր Աթոռ Սբ Էջմիածին

Հեռախոս՝ 517197

Էլ. փոստ՝ qh@etchmiadzin.am

astghikstam@gmail.com

web կայք՝

kh-tert.livejournal.com

krishayas.wordpress.com

Ստոր. տպագր.

27.12.2013 թ.

Տպաքանակը՝ 2100

Գինը՝ 50 դրամ